

7664

910.4

4-89

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться

_____ ею. _____

QITABI VƏKTINDƏ KAJTARILIZ ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

24/12	1/1	3/11
20/8-31p.	24/12	30/11
3/11	11/9	18/11
24/10	9/11	28/10
3/25	5/11	18/39
12/1	6/11	
3/11	2/11	
24/11	9/11	
3/33	26/11	
5/11	23/11	
3/103		

Neçə dəfə vərilmisdir

208

Количество предыдущих выдач _____

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՆԹԵԱՆ

400

L

ՏԱՌԵՐԻ ԳԻՆԻ

1500

աճեալ

յՕԲԵՆԵԱՆԻ

յԻՆԱՏԱԿԻՆ

№ 6

Կրտս. Բ. Ա. Բուրդուղեանի.

ԿՐԹԱԿԱՆ
ԴԿԹԱԿԱՆԱՆՆԱԿՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Центральная биб-ка им. Ленина

гор. Ереву

ИНВЕНТАРНОЕ № 1500

Գրքերի պահպանման
Բ. Գ. ԿՐԹԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՆԹԵԱՆ
Ձև № 1012
Библиот.-Читальный.
Бан. Арм. Человек. Мана

№ 6

ՀՐԵՏ. ԲՓ. Ա. ԲՈՒԴՈՒԳԵԱՆՆԻ

№ 6

910.4

4-89

պր.

82

3206
3615.

4-96

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

3206

Հ Մ Տ

Ս. ՎՈՐԻՍՏՈՖԵՐԻ

18302

Գրադարան-Ընթերցարան
Կ. Ա. ՄԱՐԿԱՍ. ԸՆԿ.
24 IV 1914
Библиот.-Читальн.
Бан. Арм. Челов. О-ва

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6.

1913

ՀԵՐԱՆԻՍ.

98

ՍԲ-Բ

Մ Մ Մ Ս Ս Ս

ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱ



1701
41

8

2 0 0 4

21942-60

I

«Համամոնիա» նաւը և ճանապարհորդները. էպէ երկերը. Լա-
մանտին. «Գուամբո» կամ մամուլութիւն. Օձի տաճարը. Կախար-
դական փողին. Մեռեալ ծառը. Նենգ ծաղիկը. Սպիտակ մըջիւնները.
Մշկոն ու վիշապաօձը. Հալլինասները. Ֆրանցի անյայտանալն
ու գտնելը:

Գլխինէի ծովածոցումն է գտնուում Աֆրիկայի
փոքրիկ վաճառաշահ Լագոս քաղաքը իր նաւա-
հանգստով: «Համամոնիա» նաւը ահօսելով Ատլան-
դեան ովկիանոսի կապուտակ երեսը՝ կանգ առաւ
հենց այդ նաւահանգստում:

«Համամոնիան» պատկանում էր համբուրգցի
միլիոնատէր Գոտֆրիդին, որի երկու որդին՝
Ֆրանցն ու Հանսօն, մէկը 16 տարեկան, միւսը՝
14, իրենց դաստիարակ մանկավարժ Բօլտենի և
նրա հօրեղբորորդի՝ բնական գիտութիւնների
մասնագէտ Հոլմի ուղեկցութեամբ ճանապար-
հորդում էին դէպի հարաւ:

Նրանց ճանապարհորդութիւնը երկու նը-
պատակ ունէր: Մէկն այն էր, որ Հանսօն թոքե-

րի բորբոքում ունէր. բժիշկները խորհուրդ էին տւել հարաւային տաք կլիմայում երկար ապրել: Իսկ երկրորդ նպատակն էր՝ դիտել և ուսումնասիրել հարաւային Աֆրիկան: Մադէյրա կղզում մի քանի շաբաթ մնալով, Հանսօն բաւականին առողջացել էր: Այդտեղից ուղևորւեցին Հագոսի նաւահանգիստը, ուր թողնելով «Համմոնիա» նաւը գիտական փոքրիկ խումբը դուրս եկաւ մայր ցամաքը:

Նախօրօք կազմած ուղեգծի համաձայն, նրանք առաջին անգամ այցելեցին եւրոպական Պայլմա կոչւած գաղութը, այնտեղից անցան խափշիկների (նեզր) «էպէ» երկիրը, որ մի փոքրիկ թագաւորութիւն էր կազմում:

Մեր ճանապարհորդների առաջնորդն ու թարգմանը Համբուրգի իրենց առևտրական տան գործակալն էր, որ շատ լաւ ծանօթ էր խափշիկների լեզւին և նիստ ու կացին: Նրանք վերցրել էին իրենց հետ նաև մի քանի խափշիկներ, որպէս բեռնակիրներ:

Հարկ չկայ ասելու, որ ճանապարհորդները Աֆրիկայի տաք եղանակին յարմար հագուստներ ունէին, իսկ գիտական աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ:

Այն օրից, երբ ոտք էին դրել Աֆրիկայի ցամաքը, այդտեղի բնութիւնը իր կենդանական ու բուսական թագաւորութիւններով միանգամայն յափշտակել էր նրանց, մանաւանդ Ֆրանցին ու Հանսոյին:

էպէ երկիրը, ուր նրանք գտնուում էին, աչքի էր ընկնում իր ճոխ բուսականութեամբ ու հսկայական անտառներով: Եւ որքան առաջ էին գնում գէպի երկրի խորքը, այնքան աւելի էր հարստանում բնութիւնը և հիացմունք ու զարմանք պատճառում նրանց:

Մօտ էր խափշիկների գիւղը, ուր գնում էին ճանապարհորդները և որտեղ ապրում էր թագաւորը: Այդ առաջին գիւղն էր, որ այցելելու էին նրանք: Դրա համար պէտք է անցնէին մի լայն լիճ: Լճի ափին նրանք պատահեցին խափշիկների, որոնք ծառի կեղևներից շինած նաւակների մէջ նստած զանազան կողմերից գալիս էին դէպի լճի կենդրոնը: Նրանցից մի նաւակ բաժանւելով առաջ անցաւ և հասնելով լճի մէջտեղը, կանգ առաւ: Այդ նաւակի մէջ կար մի խափշիկ, որ իր արտաքինով տարբերւում էր միւսներից: Նրա մերկ մարմինը ծածկւած էր կարմիր ներկով, որը տարօրինակ և ծիծաղելի տեսք էր տալիս նրան: Մարմնի վրայ նկարւած էին օձեր և ուրիշ այլանդակ պատկերներ: Գլխի երկար մազերը՝ հիւսւած բոյսերի մազաթելերի հետ՝ ծածկում էին գլուխն ու ուսերը: Վիզը, թևերի և ոտքերի դաստակները զարդարւած էին խոզուկի փշերով, իսկ մարմնի միւս մագերը պէս-պէս փետուրներով ու խեցիներով, որոնք նրա ամեն մի շարժումից զնգզնգում էին:

Դա խափշիկների վիռլին էր, որը օձի տաճարում գլխաւոր քրմի դեր էր կատարում. մի-

կնոյն ժամանակ նրանց բժիշկն ու մարգարէն էր, մի խօսքով աստուծոյն երկամբի արտայայտիչը:

Նա վերցրեց մի խեցի ու սկսեց փչել, որը տարօրինակ, ականջ ծակող ձայներ էր հանում. միաժամանակ նա սկսեց պարել, պտտելով մի ոտի վրայ: Մնացած խափշիկները իրանց մակոյկներով շրջապատել էին և լուռ դիտում էին նրան:

Վհուկը պարը վերջացրեց, ձեռքում բռնած տուփը բացեց և նրա միջից ինչ-որ փոշի թափեց ջրի երեսը, աղօթք մըթմըթալով: Չանցաւ մի քանի րոպէ, ջուրն սկսեց յուզւել ու լափին տալ: Ալիքների տակից ինչ-որ կարմիր լեզու երևաց, որը սկսեց փոշին հաւաքել: Վհուկը տուփի բոլոր փոշին էլ թափ տւեց ջրի մէջ. այդ միջոցին ջրի տակից պարզ երևաց կենդանու անձոնի սև գլուխը՝ փոքրիկ երկարաւուն աչքերով. նա սկսեց ագահութեամբ փոշին կուլ տալ:

Նաւակների միջի խափշիկները, որոնք կարծես պատրաստ զրան էին սպասում, նիզակի հարւածներով սպանեցին կենդանուն և ափ դուրս հանեցին:

Դա լամանտին կոչւած կենդանին էր՝ երկու սաժէն երկարութեամբ և մի արշին հաստութեամբ, մարմինը իլիկաձև էր, տեղ-տեղ ծածկւած խոզամազով. մորթը գորշ-մոխրագոյն էր, իսկ մէջքը փոքր ինչ թուխ:

Բնագէտ Հովմը բացատրեց, թէ լամանտին

կոչւած կենդանին համարեա բնաջինջ է եղել երկրագնդի վրայից և դա մի բախտաւոր դիպւած էր, որ այդ կենդանին պատահեց իրանց: Ծովային կաթնակեր կենդանիներից ծովային կովը, կարելի է ասել, վերջացել է, իսկ լամանտինը և ղիւզօն խիստ հազւագիւտ են: Լամանտինը, ծովի այդ հսկան, որ չորս սաժէն երկարութիւն ունի, մեծ քանակութեամբ ապրում էր Սառուցեալ ովկիանոսի սահմաններում: Կետ որսողները անխնայ ոչնչացնում էին նրանց:

Հասնելով խափշիկների գիւղը՝ ճանապարհորդները ներկայացան նրանց թագաւորին, որը ընդունեց փառահեղ դիրքով նստած, ողջունեց իր լեզւով, թանկագին հիւրեր անւանելով նրանց. բայց շուտով տրամադրութիւնը փոխեց, նոյնիսկ անբաւականութեան նշաններ ցոյց տւեց, երբ տեսաւ, որ հիւրերը իրան նւէր չեն տալիս: Ճանապարհորդները նկատելով այդ, նրան առաջարկեցին փոքրիկ հայելիներ, մկրատ, մետաղէ կոճակներ և գոյնզգոյն կտորներ:

Փափշիկները շրջապատելով նրանց՝ առանձին հետաքրքրութեամբ ու զարմանքով դիտում էին եւրոպական արդիւնաբերութեան այդ չընչին իրերը:

Նա ձեռքը տարաւ դէպի Բօլտենի ժամացոյցի շղթան. Բօլտենը ժամացոյցը հանեց և մօտեցրեց նրա ականջին. նա քիչ ականջ դրեց և վախեցած յետ-յետ բաշւելով, ահագութեամբ հաւաքեց միւս իրերը և տարաւ տուն:

Քիչ յետոյ նա ճանապարհորդներին նւէր ուղարկեց ջալամի փետուրներ, փղոսկր և երկու սիրուն փոքրիկ կապիկ, որ մեծ ուրախութիւն պատճառեցին Ֆրանցին ու Հանսոյին:

Այդ գիւղում Համբուրգի առևտրական տան ներկայացուցիչը բաժանւեց ճանապարհորդներից. նրանց որպէս թարգման մի խափշիկ տւեց, որ բաւական լաւ խօսում էր անգլիերէն: Խափշիկի անունը Աքիլլէս էր: Նա նրանց մի քանի կարևոր խորհուրդներ տւեց. որքան կարելի է քիչ ուտել տեղական մանիօկի հացից, որ դժարամարս է եւրոպացու ստամոքսի համար, չքնել գետնի վրայ և ամեն անգամ ջուր խմելուց յետոյ քնա ընդունել:

Փարթամ բուսականութեան ծոցում, սաւերախիտ հսկայ ծառերի տակ, թռչունների գեղգեղանքով օրօրւած՝ հանգիստ առան ճանապարհորդները այդ գիւղում: Խափշիկները, որոնք նոյնպէս նւէրներ էին ստացել, լաւ հիւրասիրեցին, նոյնիսկ լամանտինի մսից բաժին հանեցին նրանց:

Համանտինի միսը խոզի մսի համ ունէր և խափշիկներն ուտում էին մեծ ախորժակով, խլում միմեանց ձեռքից: Դրա պատճառն այն էր, որ նրանք շատ հազիւ են մսի համ առնում, չունեն ընտանի կենդանիներ, իսկ վայրենի կենդանիներ ձեռք բերելը այնքան էլ հեշտ չէր:

Մսի պակասութիւնից երբեմն խափշիկները

նոյնիսկ հիւանդանում են. այդ հիւանդութիւնը կոչւում է «գոլամբօ». նրանք դառնում են մեղամաղձոտ, յարձակւում են ամեն մի կենդանու վրայ և համարեա հում-հում ուտում:

Գիտնականները ենթադրում են, թէ մարդակերութիւնը վայրենիների մէջ առաջ է եկել մսեղէն կերակրի պակասութիւնից:

Բաւական հանգստանալուց յետոյ ճանապարհորդները վճռեցին դիմել վիճակին և նրանից խնդրել այն փոշուց, որով լամանտին որսացին: Նրան զբաւելու համար որոշեցին շան վզնոցը ընծայել, որը թէ կուրախացնէր նրան և թէ իբրև զարդ կը ծառայէր նրա համար:

Գիւղի միջով անցնելիս աչքի էին ընկնում խափշիկների տները, որոնց բամբուկից շինւած հովանոցաձև կտուրները յենւում էին սիւնների վրայ՝ գետնից կէս արշին բարձր. նրանք լուսամուտներ չունէին, և դռներն այնքան ցած էին, որ սողալով միայն կարելի էր ներս մտնել: Այդ խղճուկ հիւղերը կպած էին միմեանց և կազմում էին փակ բառանկիւնի: Տների այգախի դասաւորութիւնն արւած էր նրա համար, որպէսզի թշնամին յետևից չը կարողանայ յարձակւել:

Ամեն մի դռան առաջ տնկած էին մեծ մեծ քարեր, որ օճախի տեղ էին ծառայում, իսկ ծառերի ցածիկ ճիւղերից կախւած էին կոշովներ. այդ նրանց օրօրոցներն էին: Տան կահկարասիքը բաղկացած էր բամբուկի չոր ճիւղերից հիւսած նստարաններից, իսկ միջուկը մաքրած դղումը ջրի

ամանի տեղ էր ծառայում: Նրանք շուտով մօտեցան վհուկի բնակարանին, որ գտնւում էր գիւղի ծայրում և զանազանւում էր միւսններից իր մեծութեամբ: Տան մօտի բաց շինութիւնը, որ ամենից բարձր էր և որի թեք կտուրը յենւած էր բամբուկէ սիւների վրայ, խափշիկների տաճարն էր: Այդտեղ կային կուռքեր, որոնք մարդկանց և կենդանիների այլանդակ պատկերներ էին ներկայացնում: Տաճարում կային և օձեր, որոնք մշտապէս այդտեղ էին ապրում. նրանք փաթաթւած էին սիւններին:

Թարգմանին յաջողեց մի կերպ դուրս կանչել վհուկին, որը, սակայն, չէր համաձայնում կախարդական փոշուց տալ նրանց, բայց երբ շան վզնոցը ստացաւ, ուրախութիւնից աչքերը շլացան և իսկոյն ներս մտաւ և փոքրիկ արկղիկում փոշին բերաւ յանձնեց նրանց:

Որովհետեւ դեռ բաւականին օր կար, ճանապարհորդները նախ քնելու տեղ պատրաստեցին, ապա ուղևորեցին անտառ: Դեռ նոր էին ոտք կոխել անտառ, երբ հանդիպեցին մի տարօրինակ հսկայ ծառի: Նրա վրայ ոչ մի կանաչ տերև չկար, ծառը ամբողջովին սևացած էր և կարծես չորացած լինէր: Սակայն հրացանն արձակելուն պէս ծառը կարծես կենդանացաւ. չըղջիկների երամն էր, որ պատել էր ծառը և ծածկել ամեն ինչ:

Մի քիչ անց նրանք պատահեցին մի ուրիշ տարօրինակ ծառի. այդ ծառը պնշւած էր չքեղ ծի-

րանագոյն ծաղիկներով: Հանսօն հենց որ կաւաւ ծառին, ծաղիկները թափւեցին գլխին ու վզին և եղինջի նման ծակծկեցին երեսը: Թարգմանը իսկոյն պոկեց լայնատերև մի բոյս, ձեռքի մէջ տրորեց և դրեց ցաւած տեղերին, ցաւն իսկոյն անցաւ:

Դեռ նոր էին Հանսոյին հանգստացրել, երբ նկատեցին միջատների մի ամպ, որ անցնում էր առակի միւս ափով: Այդ միջատը ալ-շազանակի գոյն ունէր և տեղային լեզուով կոչւում էր բաշիկուայ: Նրանք մորեխի նման չուում են խիտ խմբերով. գետով չեն կարողանում անցնել, ուտում են ամեն մի կենդանական մարմին. նրանք յարձակւում են ամեն մի կենդանու, նոյն իսկ փղի վրայ. մտնում են նրա քիթը և ծածկում ամբողջ մարմինը: Փիղն ստիպւած պառկում է, որ տրորի նրանց գետնին, սակայն նրանց աճազին բազմութիւնը կոտորւելով չի վերջանում, և փղի վիթխարի մարմնից թողնում են միայն ոսկորները:

Նրանց երթը կատարւում է խիստ կանոնաւոր. կողքերից գնում են խոշորները, իսկ մէջ տեղից՝ փոքրերը:

Օրն անցել էր. ճանապարհորդները դարձան տուն: Անտառի ծայրին նրանց ուշքը գրաւեցին թութակներն ու կապիկները, որ անցնում էին ծառից ծառ ու աղմկում: Նոյն պահին սև բծերով մի կենդանի արագ բարձրացաւ դիմացի ծառը և ամեն ինչ լռեց. դա մշկոն էր: Նրան հե-

տևում էր վիշապ կոչւած օձը: Օձի երկարութիւնը հինգ սաժէն էր, իսկ հաստութիւնը միշակ ծառի բնի չափ:

Օձը բարձրացաւ ծառը և մինչ մշկոն երկիւղից կուշ էր եկել և անշարժ մնացել, կլանեց նրան, որից յետոյ օձի վրայ թմրութիւն եկաւ և նա ծառից վայր գլորեց: Ֆրանցը հրացանի մի հարւածով սպանեց օձին:

Օձի կաշին բերթելուց յետոյ, նրա փորից հանեցին և մշկոն, որի կաշին նոյնպէս վերցրին իրենց հետ խրաւիլակներ պատրաստելու համար: Մշկոն վայրի կատուի մի այլ տեսակն է. դրանք ապրում են Աֆրիկայում, Ամերիկայում և Ասիայում. դրանով էլ դրանք տարբերում են իրարից:

Մշկոն յայտնի է նրանով, որ արտադրում է մուշկ կոչւած իւղը. այդ իւղը հոտաւէտ է և գործ է ածում բժշկութեան մէջ իբրեւ դեղ: Գեղեցիկ է և մշկոնի մոխրագոյն մորթը իր սեւ բծերով կամ շերտերով:

Ճանապարհորդները շատ հետաքրքրւում էին տեսնել սպիտակ մրջինների բոյները: Թարգման խափշիկը գիտէր այդ մրջինների բնակելու տեղը և նրանց ուղղակի տարաւ այն կողմը: Դեռ մրջինի բոյներին չէին հասել, երբ ծառերի միջից աղմուկ ու խշխշոց լսեցին. նրանց առաջ պատկերացան մարդկային կերպարանքներ, որոնք մօտ երկու արշին հասակ ունէին:

Դրանք Աֆրիկայի թզուկներն էին, որ պատ-

կանում էին օդոնգ ցեղին: Աֆրիկայում թզուկների երկու ցեղ են ապրում՝ սկիւա և դակոս:

Թզուկներն այդտեղ երբէք գիւղ չեն հիմնում, ոչ էլ խրճիթ են ունենում. նրանք մերկանդամ թափառում են անտառում, քնում են ծառերի վրայ, սնւում են բոյսերով ու պտուղներով:

Սպիտակ մրջինների բոյները շատ հետաքրքրական էին. նրանք սեւ վեղաքանման խրճիթների էին նմանում, դրսից խորթ ու բորդութիւններ ունէին. շինւած էին աւազախառն կաւով և շատ ամուր էին: Ֆրանցը բարի մի բանի հարւածով հաղիւ կարողացաւ պատից մի կլտոր պոկել, որով մի անցք բացւեց, որտեղից երևում էր ներսի մասը, որ միջանցքների մի ցանց էր ներկայացնում:

Արևի վերջին ճառագայթները դեռ ընկած էին ծառերի կատարների վրայ, երբ ճանապարհորդները դարձան խափշիկների գիւղը: Ամենքն արդէն քուն էին մտել. գիւղում կատարեալ լռութիւն էր տիրում: Քիչ անց դուրս եկաւ լուսինը իր լրիւ դէմքով: Խափշիկները լուսնին «իօդօ» են ասում: Այդ միջոցին թագաւորի բնակարանից դուրս եկաւ մի սեւ ստուեր և առանց աղմուկի, առանց երաժշտութեան սկսեց պարել:

Դա իսկապէս պար չէր, այլ մի ծէս, մի պաշտամունք, որ խափշիկների պետը կատարում էր լուսնի պատւին, երկրպագում նրան: Այդ

միջոցին ոչ ոք իրաւունք չունէր տանից դուրս գալու:

Նախնական մարդիկ աստուածացնում էին բնութեան երևոյթները: Նրանք իրենց խորտակիչ ուժերով երկիւղ էին ազդում անօգնական մարդուն, որը տարերային այդ ուժերի մէջ կենդանի արարածներ է պատկերացնում և նրանց դարձնում պաշտամունքի առարկայ, որպէսզի չենթարկւի նրանց բարկութեան: Մեծ յարգանքի և պաշտամունքի էին արժանանում բնութեան այն երևոյթները, որոնք մեծ օգուտներ են տալիս մարդուն, օրինակ՝ արևը, լուսինը և այլն:

Հանգիստ ու խոր քնից յետոյ առաւօտեան բաւական վաղ վեր կացան ճանապարհորդները և որոշեցին գնալ անտառ որսի: Աւելի ապահով լինելու համար նրանք մի քանի ուրիշ խափշիկներ էլ տարան հետները:

Անտառում նրանք հանդիպեցին հալլինասցեղի խափշիկներին. նրանք փիղ էին որսում այնտեղ: Անտառը երեք կողմից հրդեհել էին և փղերին քշում էին դէպի մօտակայ լիճը: Փղերը կողորդիլոսների երկիւղից ջուրը չէին կարող մտնել. այդ նպատակով էլ հալլինասները փղերին կրակի ու ջրի մէջտեղ էին հաւաքում և ապա որսում:

Ամբողջ անտառը աւերւում էր կրակի բոցերից, դղրդում կենդանիների վազքից ու աղաղակներից և ծառերի ճարճատիւնից: Ամեն մի շնչաւոր, թողած իր բունն ու ընկերոջը՝ աշխատում

էր ապահով տեղ գտնել: Անտառի վիթխարի կենդանիներն անգամ սարսափում էին բնութեան տարերային ուժից. արիւնդուշտ գազանները կորցրել էին իրենց յատուկ կրքերը, մեղմացել ու խեղճացել էին:

Ոխերիւմ թշնամիներն իրար մօտ էին հաւաքւել ընդհանուր դժբախտութեան առաջ. ընծառիւծն ու վայրի այծը, խարդախ բորենին ու ընձուղտը կողք կողքի էին տւել, կարծես միմեանց պաշտպանելու հոգսով էին բռնւած: Ջայլամը ոստոստում էր փղերի արանքում:

Միայն կոկորդիլոսներն էին ուրախ ու հանգիստ դրութեան մէջ. նրանք խմբւած լճի ափին, սպասում էին մօտեցող որսին:

Կրակը շուտով իր գործը տեսաւ և կենդանիներին հաւաքեց լճի ափը, ուր սկսւեց սոսկալի մի կռիւ, որ սպանդանոցի էր նմանում: Կրակի տապից կիզւած կենդանիները ջուրն էին թափւում, իսկ ջրում կոկորդիլոսներն էին կլանում նրանց:

Ընդհանուր այդ իրարանցումին մասնակցեցին և մեր ճանապարհորդները խփելով մի քանի կենդանիներ, որ վերցրին հալլինասները: Վերջիններս զինւած էին միայն տէգերով, աղեղներով և թունաւոր նետերով:

Եւրոպացիների սիրտն անշուշտ երկար չէր կարող դիմանալ այդ նողկալի տեսարանին, և երբ ուզում էին յետ դառնալ, նկատեցին, որ Փրանցը չկար: Հալլինասները նրան փախցրել

էին փրկանք առնելու նպատակով: Հալլինասները ճարպիկ գողեր են:

Փրանցի կորուստը մոռացնել տւեց ամեն ինչ. Բօլտենը, որ պատասխանատու էր երեսանների համար, մնացել էր շւարած, չգիտէր ինչ անէր: Նա պատրաստ էր խափշիկներին մեծ փրկանք տալ, միայն թէ երեսային կենդանի վերագարձէին:

Ուղեկցող խափշիկներից երկուսին ուղարկեցին հալլինասների գիւղը՝ իմանալու տղայի տեղը և խօսելու նրանց հետ, իսկ միւսները պառկեցին հանգստանալու և անհամբեր սպասում էին նրանց վերադարձին:

Այդ միջոցին նրանց շրջապատեցին հալլինասները, խլեցին հրացանները, դանակներն ու ժամացոյցները և արագ հեռացան: Չանցած մի քանի րոպէ՝ երկու սևամորթներ բերին Փրանցին:

Հալլինասները չէին տարել վիռկի տւած կախարդական փոշին պարունակող արկղիկը, որ մեծ ուրախութիւն պատճառեց ճանապարհորդներին. սակայն երբ բաց արին այն, մէջը միայն հասարակ աւազ գտան: Վիռկը խաբել էր նրանց:

Փրանցը որոշեց վրէժ լուծել վիռկից, և երբ գիւղ դարձան, նա առաւ այրող ապակին և գնաց նստեց վիռկի դռան առաջ. ապակին բռնեց արևի առաջ և ուղղեց դէպի վիռկը: Սասկաբուռ աշխատեց պաշտպանւել, բայց տեսնելով որ հնար չկայ, բարկացաւ և անէծքով վերադարձրեց շան վզնոցը:

Երեկոյեան ճանապարհորդները դարձան Լագոս նաւահանգիստը, ուր թողել էին իրանց «Համամոնիա» նաւը: Ժողովածու կազմելու համար նրանք մեծ քանակութեամբ բոյսեր ու միջատներ էին հաւաքել:

Այդ բոլորը, ինչպէս վայել է գիտական աշխատանքին, կարգի բերին, դասաւորեցին ու դեղերով պատրաստեցին, որ չփչանան:

II

Գետածի. Կեանքը ծովում. Կտցակղձիւր:

Մի քանի օր շոգենաւի վրայ հանգիստ առնելուց յետոյ՝ մեր ճանապարհորդները սկսեցին երկրորդ շրջագայութիւնը: Այս անգամ նրանք պիտի գնային գետով և «Հանգա» շոգենաւով, յատկապէս գետածի (բեգեմոտ) որսալու, որովհետև «Համամոնիա» շոգենաւը մի քանի օր պիտի մնար նաւահանգստում ապրանք վերցնելու:

Նախքան ճանապարհ ընկնելը Հովմի առաջարկութեամբ նրանք գուրս եկան նաւահանգիստ ձուկ որսալու: Դրա համար նրանք ունէին մի մեծ ուռկան, որին յարմարեցրած էր ամուր ապակուց շինած լապտեր: Երբ ուռկանը ջրի մէջ իջեցրին, ջրի տակ բաւական մեծ տարածութեան վրայ լուսաւորւեց, այնպէս որ ուռկանի շուրջը կատարւող ամեն բան պարզ երեւում էր:

Անսովոր երևոյթը դէպ իրեն գրաւեց ջրային բոլոր կենդանիներին: Ուռկանը շրջապատւած էր անհամար այլանդակ ու հաղապիւտ կենդանիներով, որոնցից շատերը վեր չէին բարձրանում, այլ հեռուից դիտում էին: Այդտեղ կային խեցգետիններ, խխունջներ, օղակաւոր որդեր, ծովային սարգեր ու աստղեր, ծովամայրեր, ծովային մողէսներ, կարիճներ, նապաստակներ, և այլն և այլն:

Այն վայրկեանին, երբ ուռկանը դուրս էին քաշում, երկու կնիքասեղ ձուկ կուրի բռնեցին. նրանցից մէկը օժտւած էր ելէքտրականութեամբ. նա ելէքտրական հարւածով սպանեց միւսին, որն անշնչացած ընկաւ ուռկանի մէջ:

Կնիքասեղ ձկան միսը շատ համեղ է:

«Հանգա» նաւն առաջ շարժւեց և մեր ճանապարհորդները կրկին շրջապատւեցին կուսական անտառով: Առանձնապէս աչքի էր ընկնում մանգրով մշտադալար բոյսը, որ աճում է միայն արևադարձային երկրներում: Նա իր ճիւղերից ցողուններ է տալիս, որոնք ցած են իջնում և գետնի մէջ ուռճանալով նոր ճիւղեր արձակում. այդպիսով նա աճում ու տարածւում է, կապ պահպանելով բոլոր մասերի հետ, և իր ցանցերով անանցանելի դարձնում մեծ տարածութիւն:

Գետը քանի գնում նեղանում էր. վերջապէս բաժանւեց մի քանի ճիւղերի, որոնք անցնում էին ճահճուտներով: Նրանք թողին նա-

ւր և մակոյկներ նստելով, առաջ անցան եղեգնուտի միջով:

Մեծ գժւարութեամբ հասան այն տեղը, ուր ապրում էին գետածիւրեր: Այդտեղ նրանք պատահեցին մի խումբ խափշիկների, որոնք նոյնպէս գետածի էին որսում: Հագիւ էին իրար մօտեցել, երբ գետածին գլուխը դուրս հանելով ջրից, բարձրացաւ ջրի երեսը և կանգնեց եղեգնուտի մէջ:

Գետածիու գլուխը համարեա քառանկիւնի ձև ունէր, աչքերը խիստ փոքր էին, նման խոզի աչքերին, ժանիքները խոշոր: Նրա երկարութիւնը մօտ երկու սաժէն էր, հաստութիւնը՝ մէկ. լայն փորը համարեա գետնին էր հասնում. ոտները կարճ էին, կարծես կտրւած լինէին. կաշին շագանակագոյն էր և հաստ:

Խափշիկները տէգերով սկսեցին հարւածել գազանին. տէգերից շատերը, որ մի ծայրում պարաններ ունէին, մնացել էին գազանի մարմնի մէջ: Խափշիկները պարաններից բռնած գազանին քաշում էին դէպի ափ: Կենդանին կատաղի ցուրի նման բառաչում էր ու դիմադրում: Վերջապէս սոտ տւեց ու վայր ընկաւ: Խափշիկների հարւածները վերջ տւին նրա կեանքին: Սակայն նրա ձայնից օգնութեան եկաւ մի ուրիշը, աւելի խոշորը. դա արուն էր: Նրա կատաղի յարձակմանը դիմադրելու համար մեր որսորդները համազարկ տւին: Երկրորդ համազարկից յետոյ կենդանին օրօրւեց ու վայր ըն-

կաւ. սակայն նա այնքան մօտ էր նաւակին, որ իր շարժումով դիպաւ նրան ու խորտակեց: Նաւակի միջի մարդիկ շուրջը թափւեցին:

Խափշիկները ճանապարհորդներին շուտ օգնութեան հասնել չկարողացան: Հոլմը մի կերպ ջրի տակից դուրս եկաւ և ազատեց Ֆրանցին ու Հանսոյին: Բօլտենը դեռ ջրի տակն էր. նրան գտան ուշաթափւած և մի կերպ ուշքի բերին:

Այդ դէպքից յետոյ ճանապարհորդները հանգստանալու և ուտելու մեծ պահանջ էին զգում. ուստի գնացին խափշիկների մօտակայ գիւղը և լաւ հիւրասիրութիւն գտան:

Բօլտենը, որ բաւական ուժասպառ էր եղել, քնեց, իսկ միւսները գնացին անտառ իրանց ժողովածուի համար թռչունի ձուեր հաւաքելու: Հենց որ անտառ մտան, ծառի խոռոչում տեսան պղպեղակեր կամ կտցաեղջիւր (ТУКАНЬ) թռչունին: Խոռոչի անցքը այնքան նեղ էր, որ թռչունը չէր կարող դուրս գալ: Հոլմը բացատրեց, թէ երբ էզը ձու է ածում և վրան նրստում, արուն խոռոչի անցքը նեղացնում է, որ էզը միշտ ձուերի վրայ նստած մնայ: Երբ ձագերը դուրս են գալիս ձուերից, արուն նորից լայնացնում է անցքը: Քանի էզը թուխս է լինում նստած, նրան կերակրում է արուն և այնքան խնամքով ու հոգատարութեամբ, որ ինքը, արուն, խիստ նիհարում է այդ միջոցին:

Ֆրանցը բարձրացաւ ծառը, վերցրեց ձուերը և թուխս նստած թռչունին ու ցած իջաւ:

այդ ժամանակ արուն ծառի վրայ էր. նա շատ էր աշխատում իր ընկերուհուն ագատել, բայց, ի հարկ է, ոչինչ չէր կարողանում անել:

Նրանք դարձան տուն: Արուն կտցաեղջիւրը հետևում էր նրանց մինչև Լագոս:

Լագոսից գիտական փոքրիկ արշաւախումբը դիմեց դէպի Գվինէի կղզիները:

Ճանապարհին, ծովի վրայ, նրանք առիթ ունեցան դիտելու բնութեան չափազանց հետաքրքրական մի երևոյթ, որ կոչւում է ջրային կամ ծովային թաթառ: Շատ քչերին է վիճակւում բնութեան այդ հրաշալիքին ականատես լինել:

Սրածայր սև ամպը աւելի ու աւելի իջնում էր ջրի վրայ. շուրջը կծիկ տալով փրփրադէզ բարձրանում էր վեր, որը յանկարծ միացաւ ամպի հետ ու ստացւեց ոլորապտոյտ ջրային մի սիւն, որ սաստիկ արագութեամբ առաջ էր քշւում: Առաջին սիւնին զուգահեռ կազմւեց երկրորդը, երրորդը և այլն և սև թանձր ամպը կարծես վիթխարի կամուրջ լինէր՝ բարձր սիւններին յենւած, որոնք գոհարի ցոլք էին տալիս: Սիւները միանում էին միմեանց հետ կամարներով: Կամարների արանքում յուզւում, փրփրում էին սև ալիքները: Այդ փառահեղ տեսարանը լուսաւորւած էր կայծակի լուսով, կայծակի՝ որ փայլատակում էր անընդհատ: Ալիքների փրփրոտ բաշերը ցողում էին ծիածանի բոլոր գոյներով: Դա կարծես բնական երևոյթ չէր, այլ կախարդական

մի զդեակ: Այդ սքանչելի տեսարանը տեւեց մի-
այն քառորդ ժամ: Սիւները տարուբեր եղան և
խորտակեցին անեղ շառաչիւնով, որին հետեւեց
արևադարձային երկիրներին յատուկ յորդ անձ-
րեւ

Կոցահողջիւրը երեք օրից յետոյ սատկեց.
նրա մորթը բերթեցին ու պատրաստեցին ժողո-
վածուի համար խրուիլակ շինելու: Ճանապար-
հին Հոլմը Փրանցի և Հանսոյի հետ զբաղեց
մանրէների զննութեամբ խոշորացոյցի օգնու-
թեամբ:

III

Նիգերի գետաբերանը, Բոննի և Բեննի խափշիկները, Կապի
սարը, Աոիւծը, Բաօբաբ ծառը:

Նախագծած ծրագրով՝ մեր ճանապարհորդ-
ների գիտական շրջագայութեան երկրորդ շըր-
ջանն էր կազմում Նիգեր գետի ներքին հոսան-
քը: «Համմոնիա» շոգենաւը դիմեց գէպի Նի-
գերի գետաբերանը:

Այդ շրջանը յայտնի է իր վատառողջ կլի-
մայով. ահագին տարածութիւն են բռնում ճահ-
ճուտները: Այդտեղ ապրում էին խափշիկ ցե-
ղերը, որ գտնւում են կուլտուրայի ամենաստոր
աստիճանի վրայ: Մարդակերութիւնը դեռ գոյու-
թիւն ունէր նրանց մէջ:

Նիգերի գետափը բռնել էին բոննի և բեն-
նի ցեղերը, որոնք անհաշտ թշնամի են միմեանց,
շարունակ կռիւների մէջ են անցկացնում իրանց
կեանքը և իրար վնասում:

Այդ ժամանակ Նիգերի ափը բաւական տ-
պահով էր, որովհետև կռիւների թատերաբե-
մը տեղափոխւել էր երկրի խորքը:

Ճանապարհորդները մի քանի նաւաստիներ
հրաւիրեցին որպէս ուղեցոյցներ, վարձեցին քը-
սան բեռնակիր խափշիկներ և մի թարգման ու
ճանապարհ ընկան Նիգեր գետի հոսանքով գէպի
վեր: Նրանց նպատակն էր տեսնել Կապիկների
սարը, ուր գտնւում էր կապիկների գաղութը,
որոնց թիւը 5—6000-ի էր հասնում:

Առաջին գիւղը, որ հասան ճանապարհորդ-
ները, պատկանում էր բոննի ցեղին. այդ ցեղը
համեմատաբար աւելի մեղմ էր ու խաղաղ, քան
բեննիները, որոնք վայրագ են ու կատաղի:
Այդտեղ նրանք լաւ հիւրասիրութիւն գտան: Ի-
րերը երկու նաւաստիի հսկողութեան տակ թող-
նելով, իրանք առաջ գնացին: Քանի գնում էին,
բնութիւնն աւելի ու աւելի ճոխանում էր ու
պերճանում: Այդտեղը բուսականութեամբ ու կեն-
դանիների տեսակներով աւելի էր հարուստ,
քան Լագոսի շրջակայքը:

Ճանապարհին նրանք հանդիպում էին բազ-
մաթիւ գերիների—տղամարդկանց, կանանց ու
երեխաների, որոնց բեննի խափշիկները քշում
էին գէպի իրանց կողմը:

Մի քանի օրից յետոյ նրանք մտան բեննի աւազակաբարոյ ցեղի սահմանը։ Այստեղ բուսականութեան մէջ աչքի էր ընկնում բաօբար ծառը կամ կապիկի հացենին, որ առանձին անտառ էր կազմում։ Այդ ծառի հաստութիւնը հինգ սաժէն էր, իսկ խիտ ճիւղերը 12 սաժէն տարածութիւն էին բռնում։ Կապիկները այդ ծառերի վրայ են շինում իրանց բները։ Նրանք ծառի ճիւղերից և հիւսւող խոտերից գործում են վեղարանման, հովանոցաձև կտուրներ ու ամրացնում հաստ ճիւղերին. այդպիսով նրանք պաշտպանւում են արեւից և յարձակումներից։

Քանի առաջ էին գնում, Կապիկ սարը աւելի պարզ էր պատկերանում նրանց։ Վերջապէս մօտեցան մի ահագին քարաժայռի։ Այդտեղից դարաւանդներով իջնում էր դէպի գետը, որի շուրջը կային բազմաթիւ քարանձաւներ, ուր ապրում էին կապիկները։ Այդ սարը ամբողջովին բռնւած էր կապիկներով. նրանք ցերեկը գնում էին անտառը որսի, իսկ գիշերները վերադառնում իրանց բնակարանը։ Էգերը նստած էին մուտքերի առաջ, ինչպէս գիւղերում կանայք նստում են դռան շէմքերում, իսկ ձագերը բների մօտ խաղում էին, կարծես երեխաներ լինէին։

Այդտեղ կային կապիկ բոլոր տեսակներն ու ցեղերը, նոյն իսկ շիմպանզէ ու պաւիան կոչւած կապիկները։ Ամեն մի ցեղ խմբւած էր միասին և առանձին էր ապրում։ Առանձին ցեղերը թշնա-

մաբար էին վերաբերւում միմեանց ու շատ անգամ կռւում։

Այդ միջոցին երկու խոշոր կապիկներ սպառնական դիրք ընդունած կանգնած էին իրար դէմ. յանկարծ ապտակեցին միմեանց, ապա գրկախառնելով գետին գլորեցին. նրանք ճշաւով միմեանց կծում էին ու գզգզում։

Փրանցը հրապանից կրակեց նրանց վրայ. այդ բաւական էր, որ կապիկները յարձակէին ճանապարհորդների վրայ։ Քարէ կարկուտ էր, որ տեղում էր նրանց գլխին։ Կապիկները խիտ շարքերով առաջ էին գալիս։ Ճանապարհորդների համազարկերը չէին կտրում յարձակման թափը։ Նրանք պաշտպանւելով յետ էին գնում դէպի անտառ և պատսպարւում ծառերի յետւը. կապիկները այնքան էին մօտեցել, որ մնում էր ձեռքով կռւել։

Այդ միջոցին անտառում մի զարհուրելի ձայն լսեց։ Կապիկներն իսկոյն ցրեցին։ Դա առիւծն էր, որից խիստ վախենում էին կապիկները։

Առիւծի վերահասը թէև փրկեց մէկ վտանգից, բայց մի ուրիշ փորձանք բերեց նրանց գլխին։ Նրբ նա գուրս եկաւ ճանապարհորդների դէմ առ դէմ՝ համազարկ տւին նրա վրայ, որից վիրաւորւած՝ առիւծը մի վիթխարի թռիչք գործեց ու փռեց գետին, ոտքի տակ տալով շանսոյին։ Խեղճ երեխային հազիւ ազատեցին կիսաշունչ դադանի տակից։

Անտառում նրանք մի տեղ կանգ առան, որպէսզի Հանսօն մի քիչ հանգստանայ: Բայց դեռ հազիւ շունչ էին առել, երբ լացի, հեծկըլտոցի աղիողորմ ձայներ լսեցին: Բռնները յաղթութիւն էին տարել և բեններին գերի էին տանում:

Այդ իրարանցման միջոցին ճանապարհորդները իրար կորցրին: Հոլմն ու Հանսօն մնացել էին մենակ: Հոլմը մի բանի անգամ հրացան արձակեց, որպէս նշան՝ ընկերներին իրանց տեղը իմացնելու, բայց իզուր. ընկերները չկային ու չկային: Նոյն նպատակով կրակ վառեցին, դարձեալ ի զուր: Որովհետև կարող էին հեշտութեամբ վտանգի ենթարկւել, որոշեցին մի ապահով տեղ հանգիստ առնել: Ծառի վրայ բարձրանալ նոյնպէս վտանգաւոր էր օձերի և ընձառիւծների կողմից, ուստի լաւ համարեցին ծառի խոռոչ մտնել: Գտան մի բաօբաբ անագին խոռոչով, որտեղից դուրս քշեցին մանդրիլ կապկին, փոքր ու խոշոր թռչուններին ու միջատներին և մտան այնտեղ:

Քանի որ խոռոչի անցքը ոչնչով չէին կարող փակել, որոշեցին հերթով պահպանել միմեանց: Բայց նրանց վիճակած չէր կատարեալ հանգստութիւն տեսնել: Անտառը կրկին խլացաւ անդադոյ ձայների թնդիւնից. կարծես ծառերը շունչ առած դողում էին: Աղջամղջի մէջ սկին տւին 12 ճիւղային չորքոտանու կերպարանք, որ ուղիղ դէպի ծառն էին գալիս: Նրանց առաջ-

նորդը երեք անգամ սուր սուլեց և բոլոր ուժով խփեց ծառին, սակայն վիթխարի ծառը անսասան մնաց:

Դրանք երկպոզանի ռնգեղջիւրներ էին, ամենաուժեղ ու կատաղի տեսակից: Հարւածներն ու սուլոցները կրկնեցին: Հոլմը ստիպւած էր հրացանից կրակել, որի ձայնից խրտնած՝ կենդանիները փախուստ տւին:

Ռնգեղջիւրները ցերեկը հանգստանում են ծառերի տակ, հով ժամանակ գնում են ջուր խմելու: Նրանք տեղափոխւում են սովորաբար այն ժամանակ, երբ զգում են մարդու ներկայութիւնը: Ռնգեղջիւրների տեսողութիւնն ու լսողութիւնը զարգացած չեն, բայց ունեն նուրբ հոտառութիւն. հարիւրաւոր քայլի վրայ որսորդի ներկայութիւնը զգում են:

Դրանց որսալու համար նախօրօք փոսեր են փորում ճանապարհի վրայ և ճիւղերով բերանները ծածկում: Ռնգեղջիւրները որսորդներից հալածւելիս վազում են ճիւղերի վրայով և ընկնում փոսերը:

Հետեւալ առաւօտ Հոլմն ու Հանսօն դուրս եկան անտառից և դիմեցին դէպի գետափը, որը լայնանալով լճակ էր կազմում. նրա ափին վիտում էին բազմատեսակ ջրային թռչուններ—մարիբու, իբիս (արագիւղի մի տեսակը), պելիկան, որոնք շարաններ կազմած՝ յարմար առիթի էին սպասում գորտ կամ ձուկ որսալու:

Հանսօն ծառերից մէկի վրայ նկատեց տա-

ըօրինակ պտուղներ, որոնք շշի ձև ունէին, և երբ ծառը թափ տւեց, մօսկիտ կոչւած մօղուկների տարափը տեղաց նրա գլխին: Բանից երևաց, որ դրանք ոչ թէ պտուղներ էին, այլ մօղուկների բոյներ: Մօղուկների խայթոցներից ազատւելու համար նրանք ստիպւած էին ջուրը նետւել:

Ճանապարհին նրանց յաջողւեց սպանել մի վայրենի գոմէշ, որի մսից մի մեծ կտոր վերցրին հետները:

Արդէն գիշեր էր, երբ նրանք հասան բոններին գիւղը, որտեղից դիմել էին Կապկի սարը:

Այդտեղ նրանք գտան իրենց ընկերներին:

Անշափ արկածներից ու չարձարձանքներից յետոյ՝ վերջապէս մի քիչ հանգստացան այդտեղ:

IV

Ֆերնանդօ-Պօ. Թաթառ. Կափրի երկերը. Կափրերը. Բուշմէնները. Հոտտենդոտի մահը:

Ճանապարհորդները հարուստ աւարով դարձան «Համմոնիա» նաւը և այդտեղից դիմեցին Գվինէի ծովածոցի կղզիները տեսնելու. նրանցից գլխավորներն էին Ֆերնանդօ-Պօ և Պրինցև:

Ծովի ջուրը պարզ էր, ինչպէս հայելի. չորս սաժէն խորութեան մէջ ամեն ինչ երևում

էր: Ծովի կենդանիները իրենց բիւրաւոր տեսակներով զարմանք էին պատճառում ճանապարհորդներին: Փրանցի ուշքը առանձնապէս զբաւեց ծովամայրը (medusa). ընկուզի մեծութեամբ այդ ալ-կարմիր գունդը իր կապոյտ պատենաւոր վզնոցով, երկար վարդագոյն շօշափուկներով խաղում էր ալիքների հետ և հիացնում դիտողին գոյների անսովոր գեղեցկութեամբ ու պայծառութեամբ:

Ձեռքով բռնել ծովամօրը թէ անկարելի էր և թէ միտք չունէր, որովհետև նա իսկոյն ցամաքում է, գոյնը կորցնում, մնում միայն անգոյն լորձոնք: Այդ պատճառով դոյլի օգնութեամբ բռնեցին նրան և դոյլի մէջ ջուր լցնելով պահեցին այնտեղ:

Մինչ ճանապարհորդները հրճւում էին ծովային աննման խաղաղ տեսարանով, օդի մէջ մի որոշ փոփոխութիւն կատարւեց. ամենքին զգալի եղաւ, որ ինչ-որ բան է կատարւելու: Տիրեց չարագուշակ հանդարտութիւն, որ կրկին խանգարւում էր քամու յանկարծակի սուլուցով. հեռւում փայլատակում էր կայծակը: Շուտով տեսարանը փոխւեց և սկսեց բնութեան խաղը. մէկ յորդ անձրև էր թափւում, մէկ երկինքը նորից պարզւում, մէկ սաստկաշունչ քամի էր փչում և նաւը թեքում, մէկ օդն էր կանգ առնում:

Տեսարանը կրկին փոխւեց. սկսեց փոթորիկը, որ զարհուրելի էր, բայց և հանդիսաւոր

ու աւելի փառահեղ, քան բուռն երևակայութիւնը կարող է ստեղծել: ✕

Բնութեան խելագար ու կամակոր տարրերը հանդէս բերին արևագարձային երկրի բոլոր գեղեցկութիւնն ու փայլը, գոյների բազմերանգութիւնը իր ամբողջական լրութեամբ:

Քամու ահեղ շունչն ու ոռնոցը, կայծակի անընդհատ ցոլքերը, երկնքից թափւող ու փայլատակող երկնաքարերն և օդերևոյթները, ամպերի միալար գոռոցները, ծովի եռուն ու փրփրադէզ ալիքների որոտը, խաւարամած թուխւալը—այս ամենը իրար խառնւելով վկայում էին բնութեան ոյժերի թափը:

Վերջապէս փոթորիկն անցաւ, մարդիկ շունչ առան և դուրս եկան տախտակամածի վրայ: Երկինքը պարզեց և սկսեց սովորական եղանակը:

Ֆերնանդօ-Պօ կղզին, որի ափին խարխալ ձրգեց «Համմոնիա» նաւը, հրաբլիսային ծագում ունի և պատկանում է Սպանիային: Այդտեղի կլիման խիստ վատառողջ է. այդ պատճառով սպանական կառավարութիւնը այդ կղզին դարձրել է աքսորավայր:

Կղզին չատ աղքատ է կենդանիներով. այնտեղ չկան չորքոտանի կենդանիների ոչ մի տեսակը: Միայն կապիի մի քանի տեսակներ ապրում են ծառերի վրայ, ուր բոյներ են հիւսում և զանազան թռչուններ: Կղզու ափերին մօտ ապրում են սևամորթեր: Տեղի բնակիչները

անիամներն են, որոնք շատ խաղաղ, ընկճած և նոյն իսկ վախկոտ մարդիկ են: Ման են գալիս մերկ, սնոււմ են խոտերով ու պտուղներով:

Տեղային ժողովրդի մէջ տարածւած է կաշու մի տեսակ հիւանդութիւն, որ տեղական բարբառով կոչւում է «կրա-կրա». այդ հիւանդութեամբ վարակւած են բոլորը:

Մեր ճանապարհորդները բաւական առարկաներ հաւաքելով, հեռացան այդ անհիւրընկալ կղզուց:

«Համմոնիա» նաւը այդտեղից դիմեց Աֆրիկայի հարաւային ծայրը, Կապշտադ քաղաքը: Քաղաքը, նրա շրջակայքը դիտելուց և Սեդան սարը բարձրանալուց յետոյ, ճանապարհորդները մեծ քանակութեամբ մանր-մուկ իրեր գնեցին հոտոենդոտներին նւիրելու համար, առաջնորդներ ու ձիեր վարձեցին և դիմեցին երկրի խորքը:

Ճանապարհին պատահեցին բազմաթիւ գեղեցիկ ագարակների, ամարանոցների ու կալւածքների. այստեղ արդէն մուտք էր գործել կուլտուրական աշխատանքը և իր գործը տեսել:

Երկիրը մեծ մասամբ դատարկ էր և դուրկ անտառից. սակայն այստեղ բուսումն են այնպիսի բոյսեր, որ ոչ մի տեղ չեն աճում: Բայց քանի երկրի խորքն էին գնում, այնքան աւելի բուսական ու կենդանական հարստութիւնը ձուխանում էին:

Նրանք գտնւում էին արդէն Կափրի երկրում:

Միւս օրը հասան հոտատենդոտներին գիւղը, ուր ապրում էր նրանց Մագեմբա թագաւորը, ցեղի գլխաւորը:

Հոտատենդոտներին ցեղապետները ծոյլ են. նրանք ոչինչ չեն անում, միշտ մնում են տանը, խոնաւ բնակարանում, և միշտ էլ տանջւում են ոսկրացաւով: Նրանց մէջ ընդունւած է բազմակնութիւնը:

Երբ ճանապարհորդները գիւղ մտան, տներից դուրս թափւեցին սևամորթները, դղումից շինած երաժշտական գործիքների վրայ նուագելով, երգելով ու պարելով առաջնորդեցին նրանց ցեղապետի տունը: Մագեմբան ինքը դուրս եկաւ դիմաւորելու սպիտակ հիւրերին, որոնցից ընծայ ստացաւ ծխախոտ:

Մագեմբան նաև օղի խնդրեց, բայց նրանք օղի չունէին: Նա մի քանի եղ ու կով առաջարկեց նրան, ով կը բժշկէ իրեն, և երբ բացասական պատասխան ստացաւ, տրանջով հոգոց հանեց, ցաւից տնքաց ու մըթմըթալով ներս գրնաց:

Ճանապարհորդները միւս իրերը նւիրեցին հոտատենդոտներին, որով մեծ ուրախութիւն պատճառեցին նրանց:

Հոտատենդոտները շատ վատ են ապրում. նրանց տները գետնափոր են ու խոնաւ, կտուրները ձագառաձև, դռները ցած ու նեղ, օյնպէս որ սողալով միայն կարելի է ել ու մուտ անել:

Երբէք չեն լւացւում, մարմինն քսում են մի

տեսակ իւղ, որը գարշելի հոտ է արձակում. խմում են անձրևի ջուր:

Հոտատենդոտները հաւատում են, թէ մեռնողների հոգիները տեղափոխւում են օձերի մէջ և այնտեղ ապրում:

Գիւղից հեռանալով ճանապարհորդները գիշերեցին անտառում: Գիշերային կենդանիներից նրանք տեսան չղջիկների, աղէսակապկին և քամէլէնին:

Աղէսակապկը իր մարմնի կազմութեամբ մկների և կապիկների մէջ տեղն է բռնում, քայլում է յէտին ոտքերի վրայ. փոքրիկ թաթերը վերջանում են ճանկերով:

Քամէլէնը ամենածոյլ կենդանին է, սնւում է միջատներով. նրա գոյնը փոխւում է իր տրամադրութեան համեմատ. օրինակ՝ նա քաղցած է թէ կուշտ, որս է անում թէ հանգիստ է, չարացած է թէ ուրախ—այդ բոլորի ժամանակ նա զանազան գոյն է ստանում:

Կափրի երկրի կենդանիներից յայտնի են նոյնպէս վայրի այծը, վագրաձին, կվագզը, գոմէշը, բորենին, փիղը, ջայլամը և այլն:

Միւս օրը ճանապարհորդները մտան Կափրի երկիրը, ուր ապրում են բուշմէնները: Նրանք կատարեալ վայրենիներ են. ապրում են ժայռերի խոռոչներում, գետնափոր թմբերում, զազանների որջերում: Ման են գալիս մերկ, չունեն մշտական բնակարան: Խմբերով թափառում են մէկ

տեղից միւսը և անուամբ են այն ամենով—ի հարկէ հում դրութեամբ—ինչ որ մարդու ատամը կարող է կտրել:

Ճանապարհորդները յոյս ունէին մի քանի օր մնալ այստեղ, ուսումնասիրել այսնախնական մարդկանց նիստն ու կացը, սովորութիւններն ու հաւատալիքները, բայց մի անակնկալ գէպը փոխեց նրանց մտադրութիւնը:

Գիշերը նրանց վրայ յարձակում գործեցին կափերը: Կափերը ոչ մարդակեր են և ոչ էլ մարդասպաններ, բայց ճարպիկ գողեր են: Շատ անգամ յարձակում են եւրոպական գաղութների վրայ գողութեան նպատակով:

Հոտտենդոտ առաջնորդին յաջողեց՝ լուցկի վառելով անտառի զանազան մասերում՝ վախեցնել կափերին և ճանապարհ բաց անել փախչելու համար: Սակայն կափերը շուտով հասկացան, որ խաբած են, հետեցին փախչողներին և իրենց խաբող հոտտենդոտին սպանեցին:

Մեր ճանապարհորդները թէև կորցրին հրմուտ ու հաւատարիմ առաջնորդին, բայց իրենք կարողացան ձիերի օգնութեամբ փախչել ու ազատուել:

V

Մալազանները. Սրբազան աքաղաղը. Կոկորդիլոսները որպէս գատաւոր. Բանտ և ազատութիւն. Ռուս-Ռօսն:

Ճանապարհորդները ողջ-առողջ դարձան «Համմոնիա» նաւը. մի օր հանգստանալուց յետոյ

տոյ դիմեցին Մեծ ովկիանոսի հնդկական կղզիները: Մագամբիկի ջրանցքով անցան և դուրս եկան Մադագասկար կղզին:

Մադագասկար կղզու տեղական բնակիչները մալազաններ են: Հագնում են երկար շորեր, նոյն իսկ գլխարկներ են դնում: Բնակարանները մեծ են և կլոր, դռները բաւական մեծ: Ընտանի կենդանիներից պահում են թռչուններ, շուն, խոզեր և այլն, որոնք ապրում են առանձին շէնքերում:

Մալազանները պաշտում են բարւոյ և չարի ոգիներին: Բարի ոգու անունն է Զանաար, սրա որդին հսկայ Դարաֆիֆն է, իսկ չար ոգին Անգաշ է կոչւում: Կրակի ոգու անունն է Թէն-Թէն:

Նրանց հաւատալիքներից են սպիտակ աքաղաղը, որ նրանց աչքում սուրբ է համարւում, և կոկորդիլոսի ատամը. ով որ իր մօտ ունենայ սպիտակ աքաղաղը և կոկորդիլոսի ատամը, որ թալիսման է համարւում, նրան այդ երկրում ոչ ոք չի կարող ձեռք տալ, ֆրաս հասցնել. բարի ոգին, Զանաարը, նրա բարեկամը կըլինի, իսկ չար ոգի Անգաշը ֆրաս չի հասցնի:

Այդ պատճառով դեռ մալազանների գիւղը չմտած՝ մալազա առաջնորդի խորհրդով ճանապարհորդները ձեռք բերին մի աքաղաղ և մի թալիսման ու կատարեալ ապահով դրութիւն ստեղծեցին իրանց համար:

Երբ նրանք գիւղ մտան, մի անսովոր բան էր կատարւում այդտեղ. ժողովուրդը հաւաքւում

էր լճի ափը, որը ընկած էր գիւղի մի կողմում. գիւղի միւս կողմում անտառ էր:

Սպիտակ շորերով մի ծերունի կանգնած էր մէջ տեղը, իսկ նրա առջևում էլ կանգնած էր մի երիտասարդ մալազա՝ ձեռքերն ու ոտքերը կապկպած: Նրանց շրջապատել էր ամբոխը:

Ծերունին քուրմն էր. նա երդում էր տալիս երիտասարդին, թէ իրօք ինքն է գողացել իր տիրոջ շորերը: Երբ բացասական պատասխան ստացաւ, երիտասարդին հրամայեց ընկնել լիճը և լողալով անցնել միւս ափը:

Լճում ապրում էին մեծ քանակութեամբ կոկորդիլոսներ, որոնց մալազաները իրենց դատաւոր էին համարում, և ամեն մի մեղադրուողի ձգում էին լիճը. եթէ որևէ կերպ մեղադրուողը ազատւում էր կոկորդիլոսներին կեր դառնալուց, նա անմեղ էր համարւում: Բայց շատ քիչ էր պատահում, որ մէկը ազատւէր կոկորդիլոսների յարձակումից, որոնք այնքան սովորել էին մարդկային արիւնին:

Երիտասարդը լուռ ու մունջ հնազանդւեց բրմի հրամանին և իրան նետեց ջուրը. նա բաւական լող տւեց և համարեա լճի կէսը անցել էր, երբ կոկորդիլոսները շրջապատեցին նրան:

Փրանցը չկարողացաւ համբերել, որ գազանները իր աչքի առաջ գզգզեն մարդուն, չըկարողացաւ տանել այդ վայրենիների բարբարոս արդարադատութիւնը, որ կոպիտ տգիտութեան հետեանք էր, և հրացանի մի հարւածով խփեց առաջին յարձակող կոկորդիլոսին. միւսները

փախուստ տւին. երիտասարդը ողջ-առողջ ափ դուրս եկաւ:

Մալազաների ամբոխը սաստիկ գրգռեց ու յուզեց, երբ տեսաւ կոկորդիլոսին ջրում սպանւած: Բարեբախտաբար ճանապարհորդների մօտ կար սպիտակ աքաղաղ, որի պատճառով ամբոխը չյարձակեց նրանց վրայ, բայց պահանջեց, որ դատի ենթարկեն և պատժեն նրանց այդ սրբապղծութեան համար:

Ճանապարհորդներին բերին Լանի-Լամեխ քրմայետի մօտ: Նա յայտնեց, թէ առայժմ ոչ մի պատիժ չի կարող տալ յանցաւորներին, քանի որ չգիտէ աստուածների կամքը: Հրամայեց բանտ դնել նրանց և սպասել, մինչև որ ինքը կըկանչի աստուածներին և կիմանայ նրանց կամքը:

Նրանց տարան բանտ, բայց սպիտակ աքաղաղին վանդակի մէջ թողին նրանց մօտ. այդ նշանակում էր, թէ նրանց կեանքը վտանգի մէջ չէր:

Միւս օրը յանցաւորներին բանտից դուրս բերին հրապարակ: Լանի-Լամեխը երեսն ի վայր ընկաւ գետին, կանչեց ոգիներին և հարցրեց նրանց կամքը: Ապա վեր կացաւ ու յայտնեց մալազաներին, թէ ոգիները հրամայում են կոկորդիլոսների դատաստանին յանձնել այդ պիղծ եւրոպացիներին: Նրանք պէտք է երկու անգամ լճի մէկ ափից միւսն անցնեն, իսկ այդ օրը կոկորդիլոսներին պէտք է թողնել քաղցած:

Լանի-Լամեխը այդ խիստ վճիռն արձակելով՝ վանդակից բաց թողեց սալիտակ աքաղաղին ու ասաց, թէ այսուհետեւ նրանք զուրկ են պաշտպանութեան ամեն մի իրաւունքից:

Լանի-Լամեխը ձեռքի մի շարժումով հրամայեց կրկին բանտ տանել յանցաւորներին:

Այժմ ճանապարհորդները զգում էին, որ անխուսափելի է մահը. չը գիտէին ինչ անեն: Պէտք էր իմաց տալ նաւահանգստի ծառայողներին. գերմանական դեսպանն իսկոյն օգնութեան կը դարձնէր զօրքով և կազատէր նրանց. բայց ո՞վ կարող էր այդ անել:

Լուրջ վտանգի ազդեցութեան տակ ամենքն էլ մոլորւել էին և մի տեսակ կրիտիքական դրութեան մէջ էին գտնուում: Փախուստի ոչ մի էլք չկար: Բանտը շրջապատւած էր պահապաններով:

Վրայ հասաւ գիշերը, բայց ճանապարհորդները քնել չէին կարողանում: Կէս գիշերին մօտ՝ բանտի դռան մօտ լսեցին ծանօթ ձայներ: Դա նաւապետն էր, որ նաւաստիների հետ եկել էր նրանց ազատելու: Նաւաստիները նախօրօք սառը զէնքով սպանել էին պահապաններին, ապա մօտեցել բանտին:

Հրաշք էր նաւաստիների օգնութեան գալը, բայց ժամանակ չկար հարց ու փորձ անել ու իմանալ այդ հանելուկը: Բանտարկւածներին բանտից ազատելուց յետոյ բանտը հրդեհեցին ու բոլորը միասին փախուստ տւին:

Կրակի բոցը զարթեցրեց քնած մալազաշներ-

ըին, որոնք հետապնդեցին փախչողներին: Եւրոպացիների առաջնորդը, որ մի մալազաշ էր, իր ցեղակիցների ապագայ վրէժից ազատւելու համար՝ թողեց ճանապարհորդներին ու անցաւ իրենց գիւղը, որ կասկածի տեղիք չը տայ, թէ ինքն է առաջնորդել նաւաստիներին:

Եւրոպացիները թէև զրկւեցին առաջնորդից, բայց իրանք ճանապարհը գիտէին. այդ միջոցին մթութեան մէջ մէկը ձայն տւեց, որ հետեւեն իրան, և նրանք շուտով դուրս եկան անտառի միջի դատարկ տափարակը:

Մալազաշները փախչողների հետքը կորցրին և դադարեցին նրանց հետապնդել:

Վտանգն անցաւ. ամենքն էլ ազատւել էին: Նրանց երկրորդ առաջնորդն էր այն երիտասարդը, որին Ֆրանցն ազատեց կոկորդիլոսի յարձակումից և որի պատճառով մեր ճանապարհորդներն այդքան չարճարանք կրեցին:

Երիտասարդը, որի անունն էր Ռուա-Ռօա, ի նշան երախտագիտութեան խնդրեց, որ ճանապարհորդները իրան վերցնեն հետները. խոստացաւ ամենայն հաւատարմութեամբ ծառայել նրանց: Ի հարկէ, նրա խնդիրը ուրախութեամբ ընդունւեց:

Պէտք է ասել, որ Ռուա-Ռօան էր, որ միւս առաջնորդի հետ միասին գնացել էր նաւահանգիստ և իմաց տւել նաւաստիներին ճանապարհորդներին սպառնացող վտանգի մասին:

Այդ օրւանից Ռուս-Ռօսն զարձաւ նրանց անբաժան ուղեկիցը:

Ճանապարհին, մինչև նաւահանգիստ հասնելը, ճանապարհորդներին յաջողեց որսալ երկու կապիկ և ոգնու մի տեսակը. կապիկներից մէկը մարդակերպ էր, որ տեղական լեզուով կոչուում է «քաքալուտ», միւսը աղւէսակերպ—մակկի կոչւած կապիկը, որի պոչը մարմնից երկար է, գունչը աղւէսի դնչի նման, երեսը՝ մարդու:

Այս կենդանիներից ոչ մէկը չէք գտնի եւրոպական թանգարաններում: Պարզ է, թէ որքան ուրախ էին մեր ճանապարհորդները այդ հազաւգիւտ կենդանիները գտնելուն համար:

VI

Ս. Մաւրիկեան կղզին. Գաջից նկարներ. Ֆուկէ կղզին. Կորբառները. Արիւնով եղբայրանալը:

Մաղագասկար կղզուց ճանապարհորդներն ուղևորւեցին սուրբ Մաւրիկեան կղզին, որը պատկանում էր անգլիացիներին: Ճանապարհին ժողոված բոյսերն ու կենդանիները մաքրելուց ու տեղաւորելուց յետոյ՝ սկսեցին գաջից կամ գիպսից պատկերներ շինել: Մեծ դժւարութեամբ յաջողեց դուրս բերել Ռուս-Ռօսայի պատկերը, որովհետև սա երկիւղից չէր թողնում իրան նշկարել:

«Համմոնիա» նաւը հասաւ ս. Մաւրիկեան

կղզին, և որովհետև այդ կղզու բուսական ու կենդանական հարստութիւնը աղքատ էր և առանձին հետաքրքրութիւն չէր ներկայացնում, ուստի նրանք առաջ անցան ու կանգ առան Ֆուկէ կղզու դիմաց:

Այստեղ աչքի ընկան կորալեան խութերը, որ գօտեւորում էին ս. Մաւրիկեան կղզին: Խութերի շարունակութիւնն էր կազմում Ֆուկէ կղզին, որի վրայ շինւած էր փարոս:

Ծովի տեղատեւութեան ժամանակ ճանապարհորդները նաւից անցան կղզին և տեղաւորւեցին փարոսի հովի մէջ:

Շուտով ծովի տեղատեւութեանը հետեւեց մակընթացութիւնը, որի ժամանակ ջրի կատաղի ալիքները ծովի միջից խութերի մէջ էին ձգում մանր ու խոշոր ծովային կենդանիներ՝ խիռնջներ, խեցիներ, խեցգետիններ, ծովային ոգնիներ, աստղեր և բազմատեսակ ձկներ:

Երբ նորից սկսեց տեղատեւութիւնը, ճանապարհորդներն անցան խութերը և սկսեցին հալւազիւտ կենդանիներին հաւաքել: Այդպիսի յարմար առիթ ու դէպք նրանց երբեք չէր պատահել:

Մակընթացութեան ժամանակ միւսները խութերի միջից նորից դուրս եկան կղզին, բացի Հոլմից և Ֆրանցից, որ յափշտակւած գոյնգգոյն խեցիներից՝ մնացին այնտեղ: Խութերի փոսիկների մէջ ամրացել էին մի քանի խեցիներ, որ մեծութեամբ ու գոյնով հազաւգիւտ էին: Մեր

խիզախ ճանապարհորդները որոշեցին անպայման դուրս հանել այդ կենդանիներին: Նրանց օգնութեան պիտի գային նաւաստիները: Բայց մինչև միւսները կը հասնէին նաւին, սկսեց մակընթացութիւնը, և նաւապետը յայտնեց, որ ուշ է և ոչ մի օգնութիւն չեն կարող հասցնել խութերի մէջ փնցածներին:

Ծովի յախուռն ալիքները անեղագոյ ծրփանքով ու թափով զարնւում էին խութերին ու յետ կրկնում նոյն ուժով: Բոլորն էլ համոզւած էին, որ Ֆրանցն ու Հովմը կորած են:

Այդ կրիտիքական րոպէին, երբ բնութեան խելագար տարերքի տեսքն անգամ սարսափ էր ազդում, նրանց մէջ միայն մէկը ճարեց, որ սիրտ արաւ օգնութեան հասնել ընկերներին:

Դա Ռուա-Ռօան էր. նա նաւից վեր առաւ մի բանի չանկալ և մտաւ ջուրը. դրանց օգնութեամբ հասաւ Հովմին ու Ֆրանցին և տեց նրանց չանկալները: Երեքը միասին չանկալների սուր ծայրերը խրեցին խութերի մէջ և իրար յենւելով ու պաշտպանելով՝ կարողացան դիմանալ ալիքների հարձակներին ու փնցին տեղներում, թէև ջուրը բարձրացել էր մինչև վզերը:

Քիչ ժամանակից յետոյ սկսեց տեղատուութիւնը. ջուրը նորից բաշտեց. ծովը, խութերը բացւեցին: Մեր ճանապարհորդները առատ աւարով գուրս եկան ափ ընկերների մօտ, այդտեղից էլ անցան նաւը:

Այս դէպքից յետոյ Ռուա-Ռօան ու Ֆրանցը

միւսներից ծածուկ եղբայրացան և ուխտեցին միմեանց երբէք չդաւաճանել և միշտ պաշտպանել իրար: Այդ խոստումը Ռուա-Ռօայի առաջարկութեամբ՝ մալագաշների սովորութեան համաձայն՝ կատարւեց այսպէս.

Ռուան-Ռօան իր կրծքի կաշին թեթեւ ճանկեց և արիւնը քսեց մի ինչ-որ բոյսի արմատի և տեց Ֆրանցին ուտելու. ապա պահանջեց, որ Ֆրանցն էլ նոյն կերպ վարւի: Այս բանը թէև Ֆրանցին տարօրինակ, նոյն իսկ զզւելի թւաց, բայց որովհետեւ խօսք էր տւել եղբայրանալ նրա հետ, մանաւանդ որ չէր ուզում վիրաւորել ու արհամարհել այդ միամիտ, բայց ազնիւ սրտի տէր մարդուն, ինքն էլ նոյնն արեց:

Դրանց եղբայրութիւնն այնքան սերտացաւ ու սիրալիր դարձաւ, որ Ֆրանցն սկսեց նրան գրել-կարդալ սովորեցնել: Այնուհետև նրանք դարձան անբաժան եղբայրներ:

VII

Յէյլոնը. Աւաղի ազրուկները. Փղերի և վագրի կռիւը. Հին բազմաթիւ աւերակը. Ծառերին թառած զիւղը. Բիւլպօն. Կրիան. Անգին բարերի դաշտը:

Յէյլոն կղզին, որին մօտեցան մեր ճանապարհորդները հիւսիսային կողմից, միանգամայն գերեց ու զիւթեց իր բնութեան հարստութեամբ և բազմազանութեամբ: Նման ճոխ բուսականու-

թիւն և պերճ ու փարթամ կենդանական աշխարհ մեր գիտական արշաւախումբը դեռ չէր տեսել:

Կուսական բնութեան մէջ մի քիչ թափառելուց յետոյ՝ մեր ճանապարհորդները նստեցին նախաճաշի՝ համեմած թարմ, հիւթալի և բուրաւէտ պտուղներով: Մեզմ գեփիւռը, որ բերում էր արևադարձային պերճ ծաղիկների կենդանաբար բոյրը, պճնադարդ թռչունների հիսաքանչ գեղգեղանքը, հսկայ միջատների, գունագեղ թիթեռների և խայտաբղետ բզեզների սողոսկելը, ճիչն ու բղղոցը միախառնւելով, կազմում էին արևելքի բնութեան օրհներգը:

Սակայն ճանապարհորդների նախաճաշը վերջացաւ բաւական անախորժ, որովհետև աւազի մէջ ապրող տզրուկները, որ նման էին փայտօջիւի, տարածւել էին նրանց մարմնի վրայ և սաստիկ խայթում էին: Այդ կենդանիներից ազատւելու համար նրանք հանեցին շորերը և լողացան մօտակայ առւակում:

Առւակի ափին ամբողջ երամներով վխտում էին ծիրանեգոյն ֆլամինգօ թռչունները, արմաւենիների վրայ ճօճում էին կակադուները: Կոկոսի հասուն ընկոյզները թափւում էին գետին, որից նապաստակները վախեցած այս ու այն կողմ էին փախչում:

Անտառն անչափ խիտ էր. չկար ոչ մի կածան, ոչ մի հետք. ինչպէս երևում էր, մարդկային ոտը հազիւ էր կոխել այս տեղերը: Ճանապարհորդները ստիպւած էին յետ դառնալ:

Հեռուից լսում էին վագրերի մռնչիւնը, գոմէշների տուխոցը: Այստեղի վայրի գոմէշները փոքր են, բայց կատաղի տեսք ունեն, որոնցից մէկին նրանք հրացանազարկ արին և մսի լաւ տեղերից վերցրին ճաշի համար:

Գիշերելու տեղ ընտրեցին աղբիւրի մօտ, ժայռի տակը:

Փրանցն ու նաւաստիներից մէկը գիշերապահ կարգւեցին:

Գիշերային կենդանիները արմանքով դիտում էին ճանապարհորդներին. նրանց մէջ կապիկներ չկային: Ճանապարհորդների բաղդից լուսինն իր ամբողջ փայլով լուսաւորում էր երկիրը, և այն ամենը, ինչ կատարւում էր իրանց շուրջը, նրանք պարզ տեսնում էին ինչպէս ցերեկը:

Ահա գալիս են ջուր խմելու եղջերուների մի ջոկ. նրանց առաջից գնում է մայր-եղջերուն. ջոկի մէջ կան և ձագեր: Դրան հետևեց փղերի հօտը, որոնց քայլածքից գետինը շարժւում էր:

Փրանցը զարթեցրեց քնածներին, որ դիտեն այդ տեսարանը. չէ՞ որ ամեն անգամ չի յաջողւիլ այնքան փիղ ու եղջերու տեսնել միատեղ հաւաքւած:

Ռուս-Ռօան զարթնելուն պէս հենց որ այն կողմը նայեց, սառսուռ անցաւ ամբողջ մարմնով. նրա սուր ու վարժ աչքերը ծառերի արանքում նկատեցին վագրին, որը գաղտագողի սողում էր դէպի փղերի հօտը: Արիւնարբու գաղանը ըստ երևութին պատրաստւում էր յարձակւելու փղի

ձագերից մէկի վրայ, որ գնում էր հօտի ետեւից: Նա բաւական մօտեցաւ և երեք սաժէն տարածութեան վրայ մի ոստիւն գործեց ու բռնեց ձագի մէջքից: Փղիկի սուր բղղոցի վրայ օգնութեան եկան փղերը, որոնք շրջապատեցին վագրին: Սկսեց մի վայրագ կռիւ. փղերը մի քանի անգամ կնճիթներով բարձրացրին, գետնին խը փեցին ու ոտքի տակ տւին վագրին. նրա մորթը զգգւեց, գլուխը ջախջախեց, կողերը ջարդւեցին: Փղերն էլ պակաս վէրքեր չստացան, մանաւանդ մայր-փղը, որի մարմինը բզկի-բզկի էր եղել. կնճիթը արիւնաշագախ, աւանջները պատառուտած, մորթի կտորները լաթի նման կախ ընկած. նա ցաւի կսկծից կոնծկոնծում էր և օրօրւում իր տեղում:

Տեսարանը իրօք շատ ցաւալի էր, բայց մեր ճանապարհորդներին հարկաւոր էին փղի ժանիքներ ձեռք բերել, այդ պատճառով Հովմը չխնայեց իր գնդակը և նրանցից մէկին գետին գլորեց:

Երբ փղերը հեռացան, Հովմը կացնով հանեց սատկած փղի ժանիքները:

Լոյսը բացւելուն պէս ճանապարհորդները թողին գիշերավայրը և առաջ գնացին: Արմաւենու խիտ անտառի մէջ նրանք մի հին քաղաքի աւերակ տեսան: Աւերակների մէջ հանդիպեցին տեղացի բնակիչներին, որոնք սինգալեզ են կոչւում: Նրանք ինչ-որ աբայի նման շորեր ունէին հագած և առջևից կարճ գոգնոցներ կապած:

Ոտքերը բոբիկ էին: Նրանցից շատերը գիտէին անգլիերէն խօսել:

Սինգալեզների զլխաւորի անունը Րիպպօ էր:

Սինգալեզները բնաւորութեամբ բարի և խաղաղ ժողովուրդ են, պատկանում են բուդդայական կրօնին. մսեղէն երբէք չեն ուտում, չեն խմում նաև արբեցուցիչ խմիչքներ. կրօնը այդ ամենն արգելում է նրանց: Պաշտում են «Բօ» կոչւած սրբազան ծառը՝ որ Բուդդային է նւիրւած. այդ ծառի պտուղը—ֆիգի, ոչ ոք իրաւունք չունի ուտելու: Նրանց մէջ զարգացած է ստրկութիւնը:

Յէյլոնի բնիկները բաժանւում են երկու մասի՝ ազատներ, որ վելլալուկ են կոչւում, և ստրուկներ—վեդաններ:

Րիպպօն սիրալիր ընդունելութիւն ցոյց տւեց և առաջնորդեց ճանապարհորդներին գէպի իրանց գիւղը:

Բոլոր ազատականները ապրում էին ծառերի վրայ: Երբ գիւղին մօտեցան, նրանց առաջ բացւեց մի հմայիչ պատկեր. տները շինւած էին ծառերի վրայ, որոնց սուր կտուրները վերջանում էին հսկայ ծառերի խիտ ճիւղերի մէջ: Ծառերի վրայ էին բարձրանում պարանից հիւսւած սանդուխտներով: Ամեն մի ծառ, որի վրայ տուն կար, շրջապատւած էր ցանկապատով, որը անհնար էր դարձնում գազանների յարձակումները: Բակի մէջ, գետնի վրայ, կային բամբակից հիւսւած շինութիւններ. այդտեղ ապրում էին ըստրուկները և ընտանի կենդանիները:

Տներէից քիչ հեռու տարածւում էին եգիպտացորենի, մանիօկի, սուրճի և բանջարանոցային զանազան բոյսերի մշակած արտերը:

Ընտանի կենդանիներից այստեղ պահում էին այծեր և հաւեր: Առհասարակ կենդանիներն այստեղ համարձակ էին և անվախ: Այդ երևի նրանից էր, որ բնակիչները միա չէին ուտում, հետևաբար և չէին փաստում նրանց:

Գիւղի մէջտեղով անցնում էր առակը, որի վրայ շինւած էր Բուդդայի տաճարը. տաճարի մօտ բարձրանում էր «Բօ» ծառը, որ հովանաւորում էր նրան:

Րիպպօն յատկացրեց հիւրերին իր բակի մէջ մի շինութիւն և կերակրեց այն ամենով, ինչ որ ունէր: Երեկոյեան ձանապարհորդները սինգալեզներին զանազան իրեր նւիրեցին, երկար զբոյց արին Րիպպոյի և նրա ընտանիքի հետ. բազմակողմանի ծանօթացան նրանց նիստ ու կացին:

Րիպպօն հանգիստ քուն մաղթեց հիւրերին, սանդուխքով բարձրացաւ իր տուն, սանդուխքը վեր քաշեց, դուռը ծածկեց փսիաթով և գնաց քնելու:

ձանապարհորդները մի կերպ տեղաւորւեցին բամբուկէ տան մէջ, բայց հանգիստ քնել չկարողացան: Ամենից առաջ զարթնեց Հովմը տան առաստաղի վրայ առաջացած ձայներից և իրարանցումից. երբ մոմը վառեց, տեսաւ, որ մի կարմիր օձ իր օղակների մէջ խեղդում է մի հըսկայ մուկը: Գերանների արանքում մի քանի օձեր

իրար էին փաթաթւել, իսկ պատի վրայից սողում էր կարիճը:

Հովմը ձայն տւեց քնածներին, որ աղմուկով վեր կացան և տանից դուրս թափւեցին: Նրանց աղմուկից զարթնեց ամբողջ գիւղը. ամենքը վազում էին այդտեղ, կարծելով, թէ զազանները յարձակում են գործում գիւղի վրայ: Մեծ էր սինգալեզների զարմանքը, տեսնելով, որ եւրոպացիները այդքան վախենում են սողուններից: Նրանք սողուններին չեն կոտորում:

ձանապարհորդները իրենց անկողինները փոխադրեցին ծառերի վրայ, ճօճ կապեցին և մի կերպ լուսացրին այդ գիշերը:

Միւս օրը մինչև ճաշը նքանք դիտեցին սինգալեզների տնտեսութիւնը. բռնեցին մի զոյգ վայրի սիրաժարգ, որոնք երամակներով շրջում են դաշտերում, սպանեցին մի վիթխարի կրիա, որի մարմինը եօթը հոգով հազիւ բարձրացրին տեղից, և դիտեցին գէյգերեան տաք աղբիւրները: Նրա ջերմութիւնը հաւասար էր եռացրած ջրի և նաւթի ու սոխի մի տեսակ խաւնուրդի համ ունէր:

Ճաշից յետոյ արշաւախումբը դիմեց ադամանդի գաշտը դիտելու:

Յէյլոնի վրայ կան տեղեր, մեծ մասամբ աւազոտ, ուր գտնւում են թանկագին քարեր—ադամանդ, գմրուխտ, սուգակ, յակինթ, տալազիտ, տուրմալիոն կամ մոխրաքար, նոնաքար և

այլն. բոլոր այդ թանկագին քարերը գտնուում են աւազի մէջ, որտեղից փորելով հանում են:

Ինչպէս տնտեսական բոլոր աշխատանքները, նոյնպէս և այդ քարերի հաւաքելը կատարում են ստրուկները:

Մարդկութեան այդ անբաժան խորթ զաւակները, որ ապրում են ստրկութեան լծի տակ և տգիտութեան խաւարում, սնոււմ են արմրտիքներով՝ ամեն մի ընկերակց գեղունների խայթոցին. քաշ են տալիս իրանց թշուառ, կէսմարդկային, կէս-անասնական գոյութիւնը՝ առանց մի ընկերակց յոյս ունենալու, թէ երբ և իցէ ազատուելու են այդ դառը վիճակից:

Հանքային գործը Յէյլոնում տարեկան 100,000 ուռքի եկամուտ է տալիս ազատներին. իսկ իրենք, ստրուկները, որ ձեռքով են փորում տաք աւազը և այնտեղից հանում այդ թանկագին գանձը ու հազարներով են հիւանդանում, նրանք ոչ մի բաժին չունեն այդ աշխատանքից: Այստեղ էլ է թագաւորում անարդարութիւնը:

Հոլմը գնեց մի քանի քարեր, ստրուկներին մանր փող բաժանեց, և ճանապարհորդները շուտով հեռացան այդ անբերրի, արևի ճառագայթներից խանձած անապատից:

VIII

Շրջադարձիւն գէպի վեդդիների կողմը. Վեդդիների կեանքն ու բնակութիւնը

Մինդալեզների կեանքին բազմակողմանի ծանօթանալուց յետոյ, ճանապարհորդները ուղևորւեցին գէպի վեդդիների շրջանը: Նրանց հետ էր Րիպպոն իր երեսուն զինւած ստրուկներով:

Քանի հեռանում էին վեդդիների սահմանից, այնքան աւելի ու աւելի չքանում էին քաղաքակրթութեան հետքերը: Այլևս չէին պատահում ոչ մշակած դաշտեր, ոչ բանուկ ճանապարհներ և ոչ տներ: Այծերին, ոչխարներին, եղջերուներին ու նապաստակներին փոխարինում էին գոմէշների և փղերի հօտերը, յովազների վոհմակները: Բարձունքներում ձախրում էին արծիւները, բարձրաւանդակներում վխտում բազէները, իսկ աւազի վրայ նկատւում էին վագրերի հետքեր:

Ճանապարհորդներն անցան կղզու խորքը, ուր միապաղաղ անտառ էր. տեղ-տեղ անտառն այնքան խիտ էր, որ անցնել անհնար էր լինում և նրանք ստիպւած էին լինում պտոյտներ գործել:

Մի քանի օրից յետոյ հասան վեդդիների բնակութեան տեղը. նրանց թւաց, թէ Յէյլոնից յանկարծակի տեղափոխւեցին արևմտեան Աֆրիկա. քաղաքակրթութեան ոչ մի հետք չը կար թշուառ և ողորմելի տեսք ունէին նրանց ծովափէն, կեղտոտ մորթերով պատած հիւղերը, որ

կարծես մարդկային բնակարան չլինէին, այլ կենդանիների որջեր. մարդիկ սև ու մերկ էին, երեխաները բաղբրի հետ միասին թաւալուում էին ցեխոտ ջրերում:

Հենց որ տեսան սպիտակ եւրոպացիներին, կանայք և երեխաները վայրենի աղաղակներով խոյս տւին նրանցից և թագնւեցին ծառերի ետևում, իսկ տղամարդիկ տէգերը վերցրին ու ծառերի արանքում դիրք բռնեցին, սպասելով յարձակման եւրոպացիների կողմից: Ոչ յորդորներով և ոչ էլ այլ միջոցներով հնար չեղաւ նրանց մօտ կանչել, հարց ու փորձ անել:

Գիշ ժամանակից յետոյ, երբ ճանապարհորդները հանգստացան, և մի կերպ հասկացրին, որ իրենք թշնամիներ չեն և միլենոյն ժամանակ ցոյց տւին խայտաբղէտ գոյներով շորեղէններ, ուլունքներ և այլ իրեր, կանայք յափշտակւած դրանց հմայքից՝ մօտ էին վազում, խլում ու կրկին փախչում:

Ճաշի ժամանակ նկատեցին, որ վեդդիների բոլոր տղամարդիկ հաւաքւեցին, խորհրդակցեցին և անյայտացան:

Ինչպէս յայտնեց, որ վեդդիները չար և աւազակաբարոյ ցեղ են, երևի պատրաստուում են յարձակւել իրանց վրայ, այդ պատճառով խորհուրդ տւեց միշտ պատրաստ լինել և պահպաններ նշանակել:

Ճաշից յետոյ ճանապարհորդներն սկսեցին ման գալ վեդդիների հիւղերը, որ բաժանւում

էին միմեանցից ցեխոտ ճահիճներով: Կանայք և երեխաները դարձեալ խրտնոււմ էին նրանցից, չէին մօտենում և նրանց ոչ մի հարցին չէին պատասխանում:

Հիւղերի առաջ քարեր կային, որոնք ծառայում էին որպէս օճախ. մի քանի տեղ տեսան կոպիտ շինւած երկաթէ ամաններ. բայց բոլոր նշանները ցոյց էին տալիս, որ վեդդիները ուտում են և հում միս, խակ եգիպտացորեն և հացի ծառի պտուղներ:

Վեդդիները ոչ մի բանով չէին զբաղւում, անում էին պատահական որսով, մորեխով և կոկոսի կաթով. մարմինն քսում էին արմաւենու իւղ, որ զգւելի հոտ է արձակում:

Նրանք Յէյլոնի բնիկների մնացորդներն են. միւսները՝ սինգալեզները, մալաբարցները եկւորներ են: Սինգալեզները Հնդկաստանից են գաղթել: Եկւորները դրանց ատում են և նեղում ամեն կողմից, հողերը ձեռքներից խլում: Դրանց թիւը տարեցատարի պակասում է: Կղզում սկիզբ առած քաղաքակրթութիւնը բնիկներին՝ կուլտուրային անընդունակ այդ ցեղին կորստեան է դատապարտում:

Վեդդիները թափառական կեանք են վարում. նրանք ժամանակաւորապէս կանգ են առնում այնտեղ, ուր ուտելիք են գտնում: Նրանք իրանց կեանքով շատ նման են բօջաներին. դրա պատճառը անշուշտ այդ երկու ցեղերի կեանքի նոյնանման պայմաններն են: Մարդիկ

առանց ազգային գիտակցութեան և քաղաքացիական հասունութեան դատապարտւած են բարոյական անկման: Բոլոր վայրենի և կիսավայրենի ցեղերը ենթակայ են չքացման, այն ինչ քաղաքակիրթ պետութիւնները իւրաքանչիւր տարի տալիս են հազարաւոր մարդիկ, որոնք երկրագործի զանազան վայրերում գաղութներ, նոյն իսկ նոր պետութիւններ են ստեղծում, տգէտ ժողովրդների մէջ քաղաքակրթութեան լոյս տարածում:

Երկու օրից յետոյ Բիպպոյի առաջարկութեամբ ճանապարհորդները թողին վեզզիների գիւղը և դիմեցին դէպի սինգալեզների գիւղը: Վեզզիները, ինչպէս ենթադրել էր Բիպպոն, դարան էին մտել յարձակելու ճանապարհորդների վրայ. բայց շնորհիւ իրա՝ Բիպպոյի ձեռք առած միջոցների, այդ չը յաջողեց նրանց: Ընդհակառակը, Բիպպոն նրանց խաբեց և ձգեց քարանձաւի մէջ, և եթէ Հոլմը թոյլ տար, ճանապարհորդները նրանց բոլորին այնտեղ կատորելու էին:

Մարգասէր Հոլմը, որ վայրենիներին կոտորելու դէմ էր, վայրագութիւն էր համարում այդ, փող խոստացաւ Բիպպոյին և անմիտ արիւնհեղութեան առաջն առաւ:

Սինգալեզների գիւղում մի օր հանգստանալուց յետոյ, ճանապարհորդները մի քանի նաւաստիներ ուղարկեցին «Համմոնիա» նաւը՝ նաւապետին իմաց տալու, որ շոգենաւը տանի Գալլէ նաւահանգիստը և այնտեղ սպասէ իրանց:

Ճանապարհորդները որոշեցին ոչ թէ եկած ճանապարհով յետ գնալ, այլ անցնել այն տեղերով, ուր եւրոպական գաղութներ կան, որպէսզի տեսնեն, թէ եւրոպական քաղաքակրթութիւնը որ աստիճանի նուաճումներ է արել Յէյլոն կղզու վրայ:

Սրտառուչ էր ճանապարհորդների բաժանումը սինգալեզներից և առանձնապէս Բիպպոյի ընտանիքից, որ այնքան հիւրասէր էր ու բարի:

Պումբն անցնում էր գիւղից գիւղ, զեղատեսիլ վայրերով: Քանի առաջ էին գնում, միջակաւս դաշտերի տարածութիւնն աւելի ու աւելի էր ընդարձակւում: Անտառի արանքներում ձգւում էին սուրճի տնկարաններ: Այնուհետեւ գալիս էին հիւրանոցներ ու պանդոկներ. վերջապէս երևացին սպիտակ մարդիկ: Այնտեղ նրանք մի հանրակառք վարձեցին, որը նրանց հոսքեց Գալլէ նաւահանգիստը, ուր նրանց սպասում էր «Համմոնիա» նաւը:

Բիպպոն, որ իր մարդկանցով ուղեկցեց ճանապարհորդներին մինչև նաւահանգիստ, սիրալիւր ընդունելութիւն գտաւ եւրոպացիների կողմից իր այն ծառայութիւնների համար, որ նա ցոյց էր տւել գիտական արշաւախմբին, և լաւ վստահութիւն ստացաւ:

Ճանապարհորդները նամակներ և հաւաքածուի համար ժողոված իրերը Համբուրգ ճամբելուց յետոյ՝ նստան «Համմոնիան» և այս անգամ նաւի ղեկն ուղղեցին դէպի Զոնդեան կղզիները:

IX

Մալայները և նրանց գիւղը. թռչող սողուններ. Մահաւան հովիտը.

Մշանջենական կրակները. Վայրենի շներ. Հրաբուխը:

«Համամոնիա» շոգենաւը Հնդկական կապոյտ ովկիանոսի վրայ մի քանի շաբաթ պտոյտներ ա-
նելուց յետոյ՝ վերջապէս եաւա կղզու Սուրաբայ
նաւահանգստում խարխիս ձգեց:

Եաւա կղզում ապրում է մալայեան ցեղը,
որ կարճահասակ, դեղին մորթով, կոշտ ու ցից
մազերով և խիստ արագաշարժ ժողովուրդ է:

Վազուց է, որ եւրոպական կուլտուրան
մուտք է գործել և եաւա կղզին, այնպէս որ
բնիկներն ընտելացել են նրան, կորցրել իրենց
նախնական վայրենի, հասարակութիւնից խրոնող
բնաւորութիւնը. սակայն նրանք խարդախ են և
խաբեբայ:

Կղզում ճանապարհորդները աչքի առաջ
բացւեցին բրնձի, սիմինդրի, լեզակի, ծխախոտի,
բամբակի մշակած արտերի երկար տարածու-
թիւններ, գեղեցիկ ճանապարհներ և արհեստա-
կան առուներ ու ջրանցքներ:

Հետաքրքրական էին մալայների բնակա-
րանները, որ փեթակի նման կլոր ձև ունեն: Տը-
ները շինում են բամբուկից, ինչպէս մեզանում
յարդից գործում են կողովներ: Նախ գետնի մէջ
թաղում են ցցեր երկու ու կէս արշին բարձրու-
թեամբ և երկու արշին միմեանցից հեռու. այդ-
պիսով մօտ հինգ սաժէն տրամագծով շրջան են

կազմում. պատերը հիւսում են բամբուկից և
ալանդ-ալոնդ կոչւած ինչ-որ երկաթեթել խո-
տից. կտուրը շինւած է երեք գերանների վրայ,
որով ստացւում է երեք կողանի պրիզմա: Պատերի
բարձրութիւնը հասնում է մօտ մէկ ու կէս սա-
ժէնի: Յատակը նախ ծածկում են խիճ քարերով,
ապա բամբուկի տաշած հաստ գերաններով:

Տարօրինակ էր նրանց թատրոնը. այն չէն-
քը, որտեղ տրւում է ներկայացումը, կոչւում է
բալագան: Մալայների երաժշտութիւնը իր ճիւղա-
ղային աններդաշնակութեամբ եւրոպացու
նեարդերը քայքայել միայն կարող են: Մեր ճա-
նապարհորդները, որոնց հենց առաջին երեկոյեան
գորով ստիպեցին գնալ թատրոն, այն էլ բա-
ւական թանդ գին վերցնելով, հազիւ ազատ
շունչ քաշեցին, երբ ներկայացումից յետոյ դուրս
եկան այդ այլանդակութիւնից:

Երբ երեկոյեան դէմ, մեր ճանապարհորդ-
ները իրանց բնակարանի առաջ նստած հրճւում
էին բնութեան գեղեցկութեամբ, նրանց ուշա-
դրութիւնը գրաւեցին թռչող գորտերն ու սկիւռ-
ները. այդ կենդանիները նոյնքան արագ էին
թռչում օդի մէջ, ինչպէս չղջիկը, նոյն իսկ ա-
ւելի արագ:

Հետևեալ առաւօտը ճանապարհորդները գնա-
ցին տեսնելու «թունաւոր այրերից» մէկը, որ
գտնւում էր եաւայի սարերում:

Ամբողջ օրը նրանք անցնում էին տափարա-
կով, որ բռնած էր միայն խոտով: Այստեղ-այն-

տեղ նկատելի էին ռնգեղջիւրների, եղջերու-
ների, վարազների և այլ մանր խոշոր կենդանի-
ների հետքեր: Վերջապէս նրանց առաջ բացե-
ցին ապառաժ ու անպտուղ լեռներ, ժայռեր,
որոնք պարսպի նման բարձրանում էին, և որոնց
գագաթները կորչում էին ամպերի մէջ: Ճանա-
պարհը տեղ-տեղ այնքան նեղ էր, որ անհնար
էր գոյգ-գոյգ գնալ: Լեռների կուրծքը զարդա-
րող սոււերախիտ ծառերի մէջ ձախրում ու եր-
գում էին հազարաւոր թռչուններ. թռչունների
մէջ իր գեղեցկութեամբ աչքի էր ընկնում դրախ-
տահաւը: Նրա մուգ-ծիրանագոյն փետուրները,
թևերի կանաչ-ոսկեգոյն լայն շերտերը, կողերի և
կրծքի վառ կանաչը, ձիւնանման սպիտակ փորը
շողում էին արևի տակ բիւրաւոր գոյներով: Ա-
ռապելական այդ թռչունը իրաւ որ անչափ
գեղեցիկ է:

Տեսած առարկաներից ուշադրութեան ար-
ժանի էին ծիծեռնակի բները, որ այնքան ախոր-
ժակով ուտում էին մալայները. նրանք նոյն-
պէս ախորժակով ուտում են և մորեխը: Եա-
ւայի մորեխը երբ նստում է, ծառի ճիւղերի ձև
է ստանում, դրա համար էլ կոչւում է թափա-
ռող ճիւղ:

Բարձրաբերձ լեռներ, խոր-խոր ձորեր անց-
նելուց և այլանդակ ու ահաւոր գազաններ, չը-
նաշխարհիկ բոյսեր տեսնելուց յետոյ, միւս օրը
առաւօտեան ճանապարհորդները հառան «մահ-
ւան հովիտը»: Հրաբխային լեռան մի մեծ բաց-

ւածք է դա, որ խաղաղ ու հանդարտ եղանակին,
նրա յատակին հաւաքւում է ամխային գազը,
որը, ինչպէս յայտնի է, ծանր է օդից, և որը
շարունակ դուրս է գալիս գետնի խորքից հենց
այդ հովտում: Այդ պատճառով խաղաղ եղանա-
կին վտանգաւոր է այդտեղ մտնել, որովհետև
ամխային գազը թունաւորում է ամեն մի կեն-
դանու:

Քամոտ եղանակին ամխային գազը ցրւում
է օդի մէջ, այնպէս որ այդ ժամանակ կտրելի
է մտնել այնտեղ: Մեր ճանապարհորդների բախ-
տից, եղանակը այդ օրը քամոտ էր: Հոլմն ու
Փրանցը առաջնորդների ուղեկցութեամբ մտան
հովիտը: Եւ երբ դուրս եկան, ամենքն էլ գեղ-
նել ու թառամել էին: Օդը խիստ ծանր է այն-
տեղ. տձև ու սև ժայռերը, անդուրեկան մթու-
թիւնը, գալարուն օձերը, գորտերը, բուերը ու
ամեն տեսակ այլանդակ կենդանիներ ու երկոյթ-
ներ խտացնում են սպաւորութիւնը և սասա-
կացնում այն ազդեցութիւնը, որ գործում է
ամխային գազը օրգանիզմի վրայ:

Վերադարձին նրանք տեսան և «Մօրօ-Ապի»
կամ մշտնջենական կրակները: Երբ լեռներից
ցած էին իջնում, մթնշաղկին նրանք հեռից նկա-
տեցին կրակի բոցեր: Յաճում բացեց նրանց
առաջ մի սարահարթ, ուր ձգւում էր հոսող
գետը: Գետի ափին, միւս կողմից, բարձրանում
էին սեպաձև ժայռեր, որոնք իրանց անհաւասար
գագաթներով, ծերպերով, կամարներով ու խո-

ուշներով, կարծես, միջնադարեան դղեակ լինէին: Կրակի բոցերը լիզելով ժայռի կուրծքը բարձրանում էին վեր. իսկ երբ վերևից փչում էր քամին, բոցերը փռւում էին ջրի երեսին և հրդեհում գետը, ապա նորից քամու պտոյտով բարձրանում էին վեր, և այդպէս շարունակ:

Ճանապարհորդները հիացմունքով դիտում էին ու հրճւում բնութեան այդ վեհաշուք պատկերով:

Ցերեկը, արեգակի լոյսի տակ մշտնջենական կրակները, ի հարկէ, չեն երևում կամ շատ թոյլ են նկատւում:

Քամին հետզհետէ սաստկանում էր. նրանց ուղեկցող մալայները գուշակեցին, թէ փոթորիկ է սկսւելու, անհրաժեշտ էր գիշերելու ապահով տեղ գտնել. այդ նպատակով նրանց առաջնորդեցին դէպի մի քարայր: Գիշերը, երբ Ֆրանցն ու Հովմը, որոնք պահապան էին կարգւած, միւսներին քնած թողնելով, նորից գնացին դիտելու մշտնջենական կրակները փոթորկի ժամանակ, երբ բնութեան այդ երևոյթն էլ աւելի հղորանում ու Քանտաստիկ կերպարանք է ստանում, մալայները, նախօրօք ծրագրած պայմանի համաձայն, գողացան ճանապարհորդների ձիերն ու անյայտացան:

Ճանապարհորդները մնացին առանց առաջնորդների ու ձիերի այդ ամայի ու ամենի ձորերի և լեռների մէջ: Այդ դեռ բոլորը չէր. գիշերը նրանց վրայ յարձակում գործեցին վայրի շները

մի մեծ վոհմակ և երկու վագր, արու և էգ: Ճիշտ է, ճանապարհորդները, շնորհիւ բռնած յարմար դիրքի, յաղթեցին այդ գազաններին, բայց յաղթութիւնը թանգ նստեց նրանց. բացի Ռուա-Ռօայից և Հովմից, միւսները բաւական ծանր վէրքեր ստացան: Հովմի միայն կօշիկներն էին պատուել:

Առաւօտեան, լոյսը բացւելուն պէս, ճանապարհորդները թողին քարայրը և ցած իջան այն յոռսով, որ երևի մարդաբնակ մի տեղի կհասնեն: Ցածում, անտառի մէջ, նրանք պատահեցին սայլորդների, որոնք ճանապարհորդներին հասցրին մօտակայ գիւղը:

Այդտեղ վէրքերը կապելուց և մի քանի օր հանգստանալուց յետոյ, ձիեր վարձեցին ու դիմեցին այս անգամ դիտելու գործող հրաբուխը:

Մեծ դժւարութեամբ, երկու օր զնալուց յետոյ, վերջապէս հասան սարին և նրանից մօտ հինգհարիւր քայլ հեռու, մի յարմար տեղ կանգ առան, որտեղից կարելի էր լաւ դիտել ամբողջ տեսարանը: Աւելի մօտ զնալ չէր կարելի, որովհետև նոյն իսկ ամենահանդարտ միջոցին դուրս էր ձգւում մեծ-մեծ քարեր, նամանաւանդ ծծմբային գոլորշին թռնաւորում էր մարդու թորերը:

Սարի գագաթին ցցւել էր ծխի հաստ ու բարձր սիւնը, որ օդի մէջ խտանում, ամպ էր դառնում. ամպի մէջ կայծակն էր ոլորտներ գործում:

Բռուկների մեծութեամբ քարերը թռչում էին ծխի քուլաների միջից և թափւում մօտակայ անդունդը: Երբեմն եռուն ջուրը սիւնաձև վեր էր բարձրանում ու ցրւում չորս կողմը, ինչպէս կրակէ անձրև, փոշու ամպեր կազմում և ծծրմբային թթւութի դառն հոտը ամեն կողմ տարածում:

Սարի խորքից լսւում էին որոտումների խուլ ձայներ, իսկ օդը այնքան հեղձուցիչ էր, որ անհնար էր շնչել:

Բաւականաչափ դիտելուց յետոյ այդ փառաւոր երեւոյթը՝ ճանապարհորդները վերադարձան մայրանների գիւղը, այնտեղից անցան Սուրաբայ նաւահանգիստը, ուր նրանց սպասում էր «Համմոնիա» նաւը:

Եւալայից նրանք տարան իրենց հետ կենդանական և բուսական աշխարհների հազաւգիւտ նմուշներ ժողովածուի համար:

«Համմոնիան» երկու օրից յետոյ ճանապարհընկնելով սլացաւ դէպի Բորնէօ կղզին:

X

Լողացող մարգագետին. Լայրենակիցներին հանդիպելը. Բորնէօ. Քարածուխի հանքեր:

Բորնէօի ճանապարհը արկածալից չէր. եղանակը հանդարտ էր և ծովը խաղաղ. «Համմոնիա» շոգենաւը ամենայն հեշտութեամբ պատուելով ջրի երեսը՝ անցնում էր սրընթաց: Ամ-

բողջ ճանապարհին միայն մի բան առանձնապէս գրաւեց ճանապարհորդների ուշքը. դա ծովային մարգագետինն էր: Զարմանալի երեւոյթ. անծայրածիր մի տարածութիւն՝ ծածկւած խիտ բուսականութեամբ, լողում էր ջրի երեսին: Այնտեղ ապրում էին նոյնիսկ թռչուններ ու միջատներ. բուսական և կենդանական մի կեանք լողում էր ջրի երեսին:

Ծովային մարգագետինները սովորաբար առաջ են գալիս այսպէս. ծովի լստակից պոկւում է կանաչ ծովաբոյսերի մի զանգւած և լողում ջրի երեսին. նրանց միանում են երրորդը, չորրորդը և այլն, հիւսւում են իրար ու բողբոջում. դրանց միանում են ջրի երեսին լողացող հազար ու մի առարկաներ և կազմում լողացող կղզի:

Մինչ ճանապարհորդները ուշի ուշով դիտում էին ծովային մշտադալար մարգագետինը, հեռու հորիզոնում երևեցաւ մի նաւ. նրանք հեռադիտակով նայեցին և ճանաչեցին, որ դա «Յուլիոս Կեսարն» է՝ Գոտֆրիդի առևտրական նաւերից մէկը: Նրանք շուտով մօտեցան իրար: Թէ նաւապետը և թէ նաւաստիները ծանօթ էին, որոնք Ֆրանցի ու Հանսոյի սրտին մօտ շատ ու շատ նորութիւններ պատմեցին. յայտնեցին նաև, թէ նրանց ծնողները ողջ-առողջ են և միայն սիրելի զաւակների կարօտն են քաշում: Պատմեցին նոյնպէս, որ նրանց ուղարկած գիտական ժողովածուն Համբուրգի Թանգարանի զարդն է

կազմում ու որպէս գիտական իրեր թանգ գնահատւում:

Այս հանդիպումը յուզեց պատանիներին: Ճիշտ է, նրանք շատ անգամ էին յիշում ծնողներին, հայրենիքի հողն ու ջուրը, բայց ոչ մի անգամ հայրենիք գնալու բռնն ցանկութիւնը այդ աստիճանի չէր արտայայտել: Ճշմարիտ է, ճանապարհորդութիւնը իր վտանգաւոր արկածներով հանգերձ խիստ գրաւիչ էր և դիւթող, հարաւր իր կիզիչ արեւով ու փտրթամ բնութեամբ ամեն մի զրկանք չէզոքացնում էր, այնուամենայնիւ տարի ու կէս էր, ինչ նրանք թողել էին հայրենիքը, և այդ ժամանակամիջոցը բաւական էր, որ հայրենիքի կարօտը մագնիսի զօրութեամբ բաշէր նրանց:

Այն միջոցին, երբ եւրոպացիները հայրենիքի յիշողութիւններով տարւած՝ տաք-տաք խօսում ու պատմում էին իրանց կեանքից, Ռուս-Ռօան մի անկիւն քաշւած տխուր մտքերով էր մտորում: Նա էլ յիշում էր իր հայրենիքը. ծննդավայրի անհուն կարօտը նրան էլ ձգում էր դէպ իրան: Բայց որքան դառնութիւններ կապւած էին այդ յիշողութեան հետ: Նա մտաբերում էր իր հետ պատահած վերջին դէպքը, նրա մտքի առաջ կենդանանում էր քրմապետ Լանի-Լամեխի պատկերը և սարսուռ ազդում մարմին. նա և՛ սիրում էր, և ատում հայրենիքը: Այժմ աչքով տեսնելով եւրոպացիների փառած կեանքը, պարզ գիտակցում էր իր և իր ցեղակիցների թշւառ կա-

ցութիւնը: Խեղճ ստրուկներ, արդեօք դուք էլ հայրենիք ունէ՞ք, հարցնում էր ինքն իրեն և իսկոյն պատասխանում՝ չէ, ստրուկը հայրենիք չունի:

Ռուս-Ռօայի մտորումները խանգարեց Ֆրանցը. նա մօտեցաւ նրան, իմացաւ նրա տխրութեան պատճառը, մխիթարեց և յուսադրեց, թէ երբ հասնեն Գերմանիա, Ռուս-Ռօան այնտեղ կատարեալ կրթութիւն կ'ստանայ և կը վերադառնայ հայրենիք ու կը լուսաւորէ իր ցեղակիցներին՝ մալազաններին:

Ճանապարհորդները վերջապէս բարի ճանապարհ մաղթեցին իրար և նաւերը դիմեցին զանազան կողմ:

«Համմոնիան» հասաւ Բորնէօ կղզին և Բարիդօ գետի մի ճիւղով մտաւ երկրի խորքը: Ծովից կղզի դուրս գալ չէր կարելի, որովհետեւ կղզու ափերը խիստ ծանծաղուտ էին:

Բորնէօ կղզու բնիկները դայակներն են, որոնք կուտուրայի ամենացած աստիճանի վրայ են գտնւում. մարդակերութիւնը սովորական երևոյթ է նրանց մէջ:

Ամբողջ կղզին ծածկւած է կուսական անտառհրով, որոնք իրենց ճոխ ու բազմազան բուսականութեամբ մեր ճանապարհորդների զարմանքը յարուցին:

Կղզու գլխաւոր քաղաքն է Բանեար-Մասինգը. դա մի շատ հասարակ քաղաք է, ուր մի

փոքր տարածութեան վրայ, իրար գլխի թափած ապրում են չինացիներ, արաբներ, մալայներ և դայակներ, որոնք օրավարձով աշխատում են քարածուխի հանքերում:

Բոլոր տները, փողոցները և նոյն իսկ մարդկանց երեսները մրոտ էին. հանքերից մուրը առատօրէն տարածւում է և ծածկում շրջապատը և բոլոր առարկաները:

Ճանապարհորդները առաջին օրը դիտեցին Բանեար-Մասսինգի շրջակայքը և քարածուխի հանքերը: Հանքերում միջին անցքով իջան ցած և ապա մտան կողմնակի անցքերը. ամեն տեղ, գետնի այդ մութ ծոցում աշխատում էին մերկ դայակները. նրանք միայն զսգնոցներ ունէին կապած. զանազան գործիքներով կտրում էին քարածուխի կտորները, որև մեքենայի օգնութեամբ կողովներով վեր էին բարձրացւում: Ամեն մի բանւոր կրծքին ունէր թիթեղեայ լապտեր: Նեղ անցքերում օդը հեղձուցիչ էր. ածուխի թանձր մուրը պատած էր ամեն կողմ: Դառն էր այդ թըշւառ դայակների վիճակը, նոյն իսկ աւելի ծանր, քան սարկութիւնը:

Կղզու խորքերը դիտելու համար գիտական փոքրիկ խումբը այս անգամ գրաւոր պայմանով վարձեց հինգ հոգի մալայեան ցեղից և՛ վեր առնելով իր հետ պաշարեղէն և ուրիշ անհրաժեշտ իրեր՝ ճանապարհ ընկաւ ոտով, որովհետև տեղացի ժողովուրդը ձի չունէր:

Դայակները. նրանց գիւղը, բարձր ու սովորութիւնները. Մանկէհանների երկիրը. Առաջնորդների սպանութիւնը:

Մի քանի օրից յետոյ ճանապարհորդները հասան դայակների գիւղը: Ամբողջ գիւղը բաղկացած էր մի մեծ սրահից, որը մօտ հարիւր սաժէն երկարութիւն և քսան սաժէն լայնութիւն ունէր, կտուրը թեք էր ու սրածայր, ծածկած արմաւենու ճիւղերով: Ամբողջ շէնքը կանգնած էր փայտէ սիւների վրայ, որոնք երկու սաժէն բարձրութիւն ունէին, այնպէս որ տան տակից բեռնաւորած սայլ կարող էր անցնել: Գետնից տուն էին բարձրանում պարանից հիւսւած սանդուխտներով, որը գիշերը վերցնում էին:

Դայակները սպիտակ մարդ չէին տեսել, ուստի մեծ հետաքրքրութեամբ ու վայրենի շարժումներով շրջապատեցին ճանապարհորդներին. սակայն պատասխաններ տալուց չէին խուսափում. նրանք հիւրասէր էին ու ծառայելու պատրաստակամ:

Տան գլխաւոր մուտքի մօտ ճանապարհորդներին գիմաւորեց ցեղի քրամպետը. նրա մարմինը զարդարւած էր թիթեղի կտորներով, ու լուռներով ու բոժոժներով, որ ամենաթեթեւ շարժումից զնգզնգում էին և աղմուկ հանում: Նա հիւրերին հրաւիրեց տուն, յայտնեց, որ նրանք կարող են այգտեղ զգալ այնպէս ինչպէս իրանց տանը:

Սրահը, ուր մտան ճանապարհորդները, բաղկացած էր երկու մասից. մի մասում ապրում էին ազապները և ընտանի թռչունները, միւս մասը, որ սենեակների էր բաժանւած, ընտանիքաւորների համար էր։ Տան կահ-կարասին կազմում էր ծառի ճիւղերից հիւսած մի երկար թախտ, փսիւթներ, կողովներ ու մի երկու կըճուճներ։

Երեխաները, բոլորովին մերկ, խաղում էին բակում, տան առաջ. տղամարդիկ ցեղապետի առաջնորդութեամբ գնացել էին աւազակութեան։ Յեղապետին այժմ փոխարինում էր քրմապետը. կային և քրմուհիներ, որոնց համար առանձին սենեակ էր յատկացրած. սրանք սուրբ են համարւում և սրանց աղօթքով է պաշտպանւում ամբողջ ցեղը։

Սենեակներից դուրս գալիս ճանապարհորդները նկատեցին մարդկային գլուխներ, որ կախւած էին դռներից։ Առաջնորդը բացատրեց, թէ դայակները մարդիկ են որսում, գլուխները կտրում ու կախում դռներից. դա բաշխութեան նշան է համարւում։ Միայն նա իրաւունք ունի ամուսնանալու, ով գոնէ մի գլուխ ունենայ դռան վրայ կախած, իսկ ցեղապետ ընտրւել կարող է միայն նա, որի տան դռնից հարիւր գլուխ կը լինեն կախւած։

Ճանապարհորդները զգանքով հեռացան տներից և դուրս եկան դաշտ մանգալու։ Դայակների արտերը լաւ չէին մշակւած. նրանք

մշակում են բանջարեղէն, բրինձ և մի տեսակ բոյս, որից իւղ են հանում։

Անտառը լի էր հազար ու մի տեսակ թիթեռներով և միջատներով, որպիսիք ճանապարհորդները չէին տեսած։ Տեսան նաև ջրախոզ և վարազի հօտեր, որոնք աներկիւղ մօտենում էին մարդկանց. այդ բացատրւում է նրանով, որ դայակները բացառապէս մնւում են բնիկներով ու բանջարեղէնով. նրանք մսեղէն չեն ուտում, հետևապէս ոչ մի կենդանի չեն սպանում։

Դայակները կրօնով հեթանոս են, այնինչ մալայները՝ մահմեդական. մասամբ այդ և ուրիշ հանգամանքներ են պատճառը, որ այդ երկու ցեղերի միջև միշտ կռիւներ են տեղի ունենում։ Մալայները գերի են վերցնում դայակներին և աշխատեցնում քարածուխի հանքերում, իսկ դայակները սպանում են նրանց և գլուխները չորացնելով կախում իրանց դռներից։

Դայակների մէջ սովորութիւն կայ, որ նրանք իրանց հիւրերին չեն սպանում՝ թէկուզ նրանք իրենց թշնամի մալայները լինեն։ Այդ էր պատճառը, որ մալայները յանձն էին առել առաջնորդել եւրոպացիներին դայակների շրջանում։

Առաջնորդ մալայները երկու եղբայր էին՝ Բասսար և Տօրիօ, միւս երեքը Բասսարի որդիներն էին։

Բասսարի խորհրդով միւս օրը գիտական արշաւախումբը մեկնեց դէպի մանկէեան վաչկա-

տու ցեղի շրջանը, այդ ցեղի հետ ապրում էր և պունան կոչւած ցեղը:

Այդ ճանապարհորդութիւնը տեւեց մի քանի օր. նրանք բաւական նեղութիւններ ու շարժարանք կրեցին, որովհետեւ Բասսարը դիւմամբ նրանց տանում էր վտանգաւոր տեղերով: Նրա նպատակն էր կամ ճանապարհին կամ հենց այն տեղում, ուր ապրում էր պունան ցեղը, մի քանի գերի բռնել:

Բասսարի չար միտքը և խարդախ վարմունքը շատ շուտ հասկացաւ Հոլմը, բայց թէ ինչ էր անելու այդ նենգ մալայը—նա, ի հարկէ, իմանալ չէր կարող. չէր կարող նաև նրա առաջն առնել:

Ճանապարհորդների բախտից մակէեան ցեղը շատ հիւրասէր էր ու սիրալիր. առանձնապէս լաւ տպաւորութիւն թողեց ճանապարհորդների վրայ ցեղապետը, որը չընդունեց նրանց նւէրները, յայտնելով, որ մակէեան ցեղը հարուստ է և նրանց համար անպատւաբեր է հիւրասիրութեան համար նւէրներ ստանալ: Հրամայեց իր մարդկանց ճանապարհորդներին ամեն տեսակ յարմարութիւն տալ և ծառայել նրանց, որովհետեւ ամեն մի հիւր այդ երկրում անձեռնմխելի է և վայելում է կատարեալ ազատութիւն:

Ճաշից յետոյ գիտական խումբը գնաց դիտելու այն գետը, որը իր աւաղի հետ խառը օսկու փոշի է պարունակում. տեղացիները հաւաքում են օսկին և վաճառում: Այգետեղ ժողովուրդը

սիրով ընդունեց նրանց ու նոյնիսկ ի պատիւ հիւրերի տեղական խաղեր սարքեց:

Վճուած էր հետեւեալ օրը հեռանալ այգտեղից. երեկոյեան արդէն ներկայացել էին ցեղապետին և մնաս բարով ասել, և այն միջոցին, երբ իրերը կապկպում էին վաղ առաւօտեան ճանապարհ ընկնելու, նրանց սենեակը շրջապատեցին քսան զինւած զայակներ: Դրանք յարձակեցին Բասսարի և նրա ընկերների վրայ, գերեցին ու տարան: Եւրոպացիները, որոնց համար տարօրինակ էր այդ անակնկալը, դիմեցին ցեղապետին խնդրելով ազատել իրանց առաջնորդներին:

Ցեղապետը բացատրեց, որ ինքը ոչ մի օգնութիւն անել չի կարող, որովհետեւ նախ յարձակւողները մակէեաններ չեն, երկրորդ՝ ինքը, Բասսարը կոտորել է պունան ցեղի այդ մարդու ամբողջ ընտանիքը, որը այժմ վրէժ է լուծում նրանից: Խարդախ Բասսարը օգտուելով այն հանգամանքից, որ մակէեանները հիւրերին անվտանգ են թողնում, եւրոպացիների պաշտպանութեան տակ ուզում էր ոճրագործութիւն ևս կատարել, սակայն իր չար բախտից բռնւում է հենց յանցագործութեան տեղում: Ցեղապետը բացարձակապէս հրաժարւում է ազատել աւագակներին, սակայն իր մարդկանցից առաջնորդներ է տալիս ճանապարհորդներին, որ նրանց անվնաս տեղ հասցնեն:

Երբ ճանապարհորդները գիւղից դուրս էին գալիս, գիւղի ծայրում գտնւող մի տնակի դռնե-

րի վրայ տեսան Բասսարի և նրա բարեկամների արիւնոտ գլուխները կախած:

Կիտական խմբի վերադարձը կատարւեց շատ յաջող ու անվտանգ. ամեն տեղ նրանց ընդունում էին սիրով և առաջնորդներ տալիս:

Նաւահանգիստ հասնելուն պէս ճանապարհորդները տեղեկութիւն տւին Հոլլանդական նահանգապետին Բասսարի և նրա բարեկամների սպանութեան մասին, վճարեցին նրանց ընտանիքին պայմանով խոստացած փողը ու թողին Բորնէօ կղզին:

«Համամոնիա» նաւը իր ընթացքը ուղղեց դէպի Լոմբոկ կղզին. դա Զոնդեան ամենափոքր կղզիներից մէկն է:

XII

Լոմբոկ. Ծովեզրեայ գիւղը. Ծովային անտառը. Յելեբէս. Այլֆուրները. Տրեպանգի որսը. Սպանւած ընկերը:

Ով տեսել է Եաւա և Բորնէօ կղզիները, նրա համար Զոնդեան միւս կղզիները առանձին հետաքրքրութիւն չեն կարող ներկայացնել, որովհետեւ զրանք բոլորը ունեն նոյն կենդանական ու բուսականը և նոյն իսկ, ինչպէս ենթադրում է անգլիացի բնագէտ Ուոլլէսը, մինչև պատմական շրջանը մի մայր ցամաք են եղել կազմելիս:

Այդ պատճառով ճանապարհորդները որոշեցին Լոմբոկ և Յելեբէս կղզիներում մեծ շրջա-

գայութիւն չկատարել, այլ բաւականանալ միայն ծովափերը դիտելով:

Լոմբոկի ափը, ուր դուրս եկան ճանապարհորդները, աւազոտ էր և տեղ-տեղ միայն երևում էին ցած ու այլանդակ թփեր: Մի քանի նշաններից երևում էր, որ կղզին հրաբխային ծագում ունէր:

Անտառը բաւական հեռու էր ափից և շատ նոսր. բոյսերի մէջ աչքի էր ընկնում արմաւենու մի տեսակը, որ աճում է միայն այդ կղզում: Այդ ծառը իր գոյութեան ընթացքում միայն մի անգամ է ծաղկում. երբ ծաղկում է, տերևներն են թափւում, իսկ երբ պտուղներն են հասնում՝ ինքը ծառն է չորանում: Այդ պատճառով անտառը մի տարօրինակ պատկեր էր ներկայացնում՝ կէս-չորացած, կէս-դալարուն ծառերով:

Մի քանի ժամ առաջ անցնելով, ճանապարհորդները հանդիպեցին բրնձի և բամբակի մշակւած արտերի, որոնց արանքում ընկած էին նրանց խղճուկ խրճիթները:

Այս կղզու բնակիչները մալայեան ցեղին էին պատկանում՝ կրօնով մահմեդական: Լոմբոկ կղզին եւրոպացիները հազիւ են այցելում. այդ պատճառով էլ այս կիսամերկ վայրենի ժողովուրդը սպիտակամորթ մարդիկ շատ քիչ է տեսել, հետևաբար անծանօթ էին հրազենին և առհասարակ եւրոպական քաղաքակրթութեան նշաններ չէին երևում այստեղ:

Սկզբում նրանք խուսափում էին ճանապար-

հորդներէից, յետոյ կամաց-կամաց մօտեցան, գրաւելով նրանց նւէրներէից: Նրանց մէջ չկար եւրոպական որևէ լեզու իմացող, միայն նաւաստիներից մի քանիսը բաւական դժարութեամբ խօսում էին մալայեան լեզուով, այնպէս որ ճանապարհորդները ճարահատում միմեկաներով էին իրանց միտքը յայտնում: Այդ ձեւով նրանք հասկացրին, որ այդտեղ ապրում են օրանգ-ուտանգ ցեղի կապիկներ, որ բաւականի փափ են պատճառում իրենց. և որ Լոմբոկի բնակիչները հարկ են վճարում Հոլլանդական կառավարութեանը, այն էլ բռնձով և բամբակով:

Լոմբոկի այդ վայրենիները շատ ազնիւ և հիւրասէր էին: Երբ ճանապարհորդները երեկոյեան վերադարձան նաւը, շատերն ուղեկցեցին նրանց. նրանք մեծ զարմանքով և նոյն իսկ երկիւղով դիտում էին նաւում ամեն մի առարկայ, ենթադրելով բարի կամ չար ոգի նրանց մէջ: Առանձնապէս այդ նախնական մարդկանց մեծ զարմանք պատճառեց դաշնամուրը. նրանցից ոմանք նոյնիսկ այնքան սիրտ առան, որ սկսեցին մատնելով ուժեղ խփել գործիքի ստեղծուածներին ու զարմանում էին նրա արձակած ձայներից:

Գինով հիւրասիրելով և նւէրներ բաժանելով հիւրերին՝ ճանապարհորդները ափ դուրս բերին մալայներին և սիրով բաժանեցին նրանցից:

«Համմոնիա» նաւը ուղևորեց դէպի Յելեբէս կղզին:

Նաւապետը, որ մի քանի անգամ եղել էր Յելեբէս կղզում, գիտէր տեղային բնակիչներին՝ ալֆուրների, կատաղի բնաւորութիւնը, խորհուրդ չէր տալիս գնալ այնտեղ, բայց այնուամենայնիւ Փրանցի և Հանսոյի թախանձանքին զիջանելով, Օրանգ-Բադիւն ծովածոցի մօտ կանգ առաւ նաւը:

Այդտեղ էր գտնւում առաջին գիւղը. տները շինւած էին ցցերի վրայ, ջրից մի սափէն բարձր: Տեղային ժողովուրդը, որ խառնուրդ էր մալայների ու չինացիների, զբաղւում էր առևտրով հարեան ծովափնեայ ժողովուրդների հետ: Նրանք մեծ մասամբ ձկնորսներ էին:

Շոգենաւից ճանապարհորդները նաւակներով անցան գիւղի ջրով ծածկւած փողոցները, ուր նրանց գիւմաւորեցին գիւղացիները, առաջարկելով զանազան իրեր ու առարկաներ:

Ափին բաւական մօտ ջրասոյգ մերենայի ու լապտերի օգնութեամբ ճանապարհորդները սկսեցին հաւաքել ջրային բոյսեր՝ լոռեր, ջրմուռներ:

Ծովի յատակը անչափ հարուստ էր բուսականութեամբ: Դեղին, կանաչ, կարմիր ու կապոյտ բոյսերը, հազար ու մի ձևի ու չափի տերևները ցոլում էին ծիածանի բոլոր գոյներով, որ ջրի տակ հաագին տարածութիւն էին բռնում. դա արեւադարձային ծովաբոյսերի մի անտառ էր:

Այդ ամենը լուսաւորւած լապտերի լուսով՝ իր վրայ էր բեռնում ամենքի հայեացքը և կախարդիչ տպաւորութիւն թողնում:

Լապտերի լուսով ջրի մէջ երևում էր այն ամենը, ինչ կար և կատարւում էր այնտեղ: Այդ հանգամանքը զրգոնց տեղացիների ախորժակը, և մինչ ճանապարհորդները զբաղւած էին իրանց գործով, նրանք պատրաստւում էին յարձակել և ճանապարհորդների ձեռքից խլել լապտերը:

Եւ երբ ջրասոյգ նաւաստին՝ իր գործը վերջացնելով՝ ջրի տակից դուրս եկաւ, նրանք զիմեցին Բօլտենին և կոպտաբար պահանջեցին իրենց յանձնել լապտերը:

Լապտերը, որ այնքան անհրաժեշտ էր ճանապարհորդներին, վայրենիներին տալ, ի հարկէ չէր կարելի. ճանապարհորդների բացասական պատասխանը տեղի տւեց կռիւ:

Մինչդեռ եւրոպացիները նաւակ նստած մի կողմից պաշտպանւում էին հրացաններով, միւս կողմից դէպի շոգենաւը դիմում, տեղացիները՝ ոմանք ցամաքից, ոմանք էլ իրենց նաւերը նստած՝ սկսեցին հալածել նրանց սլաքներով: Ճանապարհորդներին օգնութեան հասաւ շոգենաւը, որը թնդանօթից մի քանի անգամ արձակելով կանգնեցրեց թշնամու յարձակումը: Տեղացիներին փնտսելու նպատակ չունէին նրանք, այլ ինքնապաշտպանութեան համար էր այդ:

Այդ պատճառով երբ նաւակը հասաւ շոգե-

նաւին՝ ճանապարհորդները մտան շոգենաւը և անմիջապէս հեռացան այդտեղից:

Նրանք մօտեցան կղզուն հիւսիսային ծայրից և ափ դուրս եկան. մի խուլ և անմարդաբնակ վայր էր այդ: Այս անգամ որոշեցին առաջնորդներ չը վարձել, գործ չունենալ տեղային ժողովրդի հետ, նրանց տները չգնալ, միայն բոյսեր և կենդանիներ հաւաքել: Լիովին ապահով լինելու համար նրանք շոգենաւի մէջ թողին միայն նաւապետին մի երկու նաւաստիի հետ, իսկ միւս նաւաստիներին վերցրին իրենց հետ՝ զէնքի մեծ պաշարով:

Ճանապարհորդները շուտով մտան անտառ, որտեղ խոր լուսթիւն էր տիրում. չէին երևում ոչ մարդիկ և ոչ անասուններ, միայն թռչունների երամներն էին այդ վայրի բնակիչները: Այստեղի թռչունները նմանապէս չէին փախչում մարդկանցից, այնպէս որ կարելի էր ձեռքով բռնել նրանց: Այդտեղ պատահեցին այնպիսի թռչունների, որ ոչ մի տեղ դեռ չէին տեսել:

Քանի անտառի խորքն էին գնում, այնքան աւելի ու աւելի ճահճոտ էր դառնում նա: Վերջապէս նրանց ահանջին հասան աղմուկ, շխշխկոց և վազվզոցի ձայներ. Ռուա-Ռօան յայտնեց, որ նրանք անշուշտ վարազներ են կամ բաբիրուսս կոչւած կենդանիներ:

Քիչ յետոյ նրանք լսեցին և մարդկային ձայներ ու թփերի հտկում տեսան կարմրամորթ այլֆուրներին: Այլֆուրները բոլորովին մերկ էին

և բաւ գինւած, կարճահասակ էին ու թուլահազմ:

Նրանք խօսում էին կոտորուած ֆրանսերէն լեզուով. բաւական հիւրասէր և բարի մարդիկ երեացին. յայտնեցին, որ իրենց գիւղն ու կարողութիւնը հիւրերի տրամադրութեան տակ են դնում, որոնք կարող են ազատ որս անել անտառում. բացի այդ ճանապարհորդներին ընծայեցին մի սպանւած բարիբուստ, ապա հրաւիրեցին ծովածոցը, ուր երեկոյեան տրեպանգ պիտի որսային:

Ճանապարհորդները բարիբուստը պահեցին խոտերի տակ և անտառով առաջ գնացին: Երեկոյեան դէմ երբ վերադառնում էին ծովափը, ուզեցին վերցնել պահած բարիբուստը, բայց այլֆուրները զողացել էին: Այդ բանը կասկած քցեց ճանապարհորդների սիրտը: Այնուամենայնիւ նրանք եկան ծովափը, ուր տեղի էր ունենում տրեպանգների որսը. այդտեղ հաւաքւած էր մեծ բազմութիւն: Այլֆուրները ոչ մի թշնամական նշան ցոյց չուէին, ընդհակառակը իրենց շատ համեստ և զսպած էին պահում:

Տրեպանգի երկարութիւնը մօտ մի ոտնաչափ է, հաստութիւնը՝ չորս մատնաչափ. կաշին բաւական հաստ է և մութ մոխրագոյն կամ սև. նա երբեքս զուրս է գալիս ջրից և պառկում արևի տակ, առանց կենդանութեան նշան ցոյց տալու. այդ ժամանակ նա նմանում էր երկար երշիկի:

Հնդկական օվկիանոսի նաւահանգիստնե-

րում չորացրած տրեպանգը առևտրի գլխաւոր առարկաներից մէկն է կազմում:

Այդ կենդանին ապրում է ջրի տակ լուերի, ջրային բոյսերի վրայ: Այլֆուրները տրեպանգ որսալու համար նստում են նաւակներ, ապա նրանցից մէկը սուզւում է ջրի մէջ և բամբուկէ սուր փայտով սպանում նրանց, իսկ միւսները հաւաքում են:

Ճանապարհորդները նոյնպէս նաւ նստեցին և սկսեցին նրանց հետ նոյն որսով զբաղել: Տեսարանը գեղեցիկ էր, հրապուրիչ ու գուրեկան:

Երբ որսը վերջացաւ, եւրոպացիք բռնեցին վաղօրօք պատրաստած իրենց տեղը: Քնելուց առաջ, Բօլտենը պահապաններ կարգեց, յորդորեց զգոյշ լինել. չգնալ գիւղը և առհասարակ ընդհարման ոչ մի տեղիք չտալ: Բոլորն էլ յոգնած էին երկար մանգալուց և օրուայ տալաւորութիւններից. յոյսերը գնելով պահապանների վրայ՝ ամենքն էլ խոր քուն մտան:

Առաւօտեան Բօլտենը զարթնելուն պէս իմացաւ, որ պահապաններից մէկը, մի համարձակ երիտասարդ նաւաստի, չկար. նա մենակ գնացել էր գիւղը, որին և այլֆուրները սպանել էին. նրա դիակը գտան գետնի մէջ թաղած:

Այլֆուրները վրէժխնդրութիւնից ազատ ֆալու համար՝ թողել էին գիւղը և հեռացել: Նաւաստիի մարմինը ճանապարհորդները վերցրին հետները և երբ հասան շոգենաւին ու ան-

ցան ծովի վրայ բաւական տարածութիւն, առանձին հանդիսաւորութեամբ ձգեցին ծովը:

Նաւապետը պատմեց, որ նման մի գէպը տեղի էր ունեցել նաև իրեն հետ, երբ նա մի քանի տարի առաջ այցելել էր այդ կղզին:

Ճանապարհորդները տխուր տպաւորութեան տակ դիմեցին դէպի Աւստրալիական Նայտ կղզին. այդտեղ ապրում է պապուաացիները, որը գտնւում է մարդկային կուլտուրայի ամենացած աստիճանի վրայ:

XIII

«Բնագէտների թանգարանը». Գոլոտուրի. Նայտ կղզին. Պապուաացիները. Պարկաւոր կենդանիներ. Խափշիկների գիւղը. Հողակերները:

Նայտ կղզու վրայ ապրում է մակագամ խաղաղ ցեղը. բնաւորութեամբ անվնաս կենդանիներից համարեա չեն տարբերւում, չունեն ոչ ցեղապետ, ոչ օրէնք, ոչ բնակարան և ոչ ընտանեկան կեանք: Ման են գալիս մերկ. բնում են որտեղ պատահում է, ուտում են ինչ որ ձեռքներն է ընկնում: Միշտ վառ են պահում կրակը և շատ հմուտ կոււում են ջրի դէմ:

Բացի մակագամներից կղզու վրայ ապրում են նոյնպէս էխաուսները: Այդ երկու ցեղերը շարունակ կոււում են իրար հետ. կուին մասնակցում են նաև կանայք: Նրանք յարձակւում են միմեանց վրայ փայտերով ու բրիչներով. նիզա-

կի կամ տէգի գործածութիւնը չը գիտեն:

«Համամոնիան» ճանապարհին պատահեց Կորալեան մի փոքրիկ կղզու: Ճանապարհորդները նաւակով անցան կանաչ լիճը, որ գտնւում էր կղզու կենդրոնում. մինչ ծովը յուզւած էր ու ալեկոծ, լիճը, ընդհակառակը, խաղաղ էր ու անշարժ: Նրա հայելու նման պարզ ջրում աճում էր օրգանական էակների մի ամբողջ աշխարհ:

Ամենից աւելի Հանսոյին գրաւեց գոլոտուրի՝ ճիճուի նման կենդանին. նա ունէր մանիշակի գոյն: Երբ պատանին ձեռքով ջրից հանեց կենդանուն, նրա ձեռքին մնացել էր միայն լորձուկոտ մաշկը. կենդանու մարմինը ձեռքից գուրս էր սողացել:

Հովմը բացատրեց, որ գոլոտուրին կարող է կտոր-կտոր լինել և կորցնել իր մարմնի մասերը, բայց բաւական է, որ գլուխը ամբողջ մնայ, նրա կորցրած կամ պոկւած մասերը նորից աճում են, որովհետև գլխի մօտ են գտնւում օղակաձև նեարդերը: Ինքնակամ կտոր-կտոր լինելու և կորցրած մասերը նորից զարգացնելու ընդունակութիւնը, գիտնականների բացատրութեամբ, գոլոտուրիի համար ծառայում է որպէս ինքնապաշտպանութեան միջոց: Երբ գոլոտուրին նեղ տեղն է ընկնում, իր մարմնի երկրորդական մասերը թողնում է թշնամու ճանկերում կամ բերանում և ազատում գլուխը, որ նորից աճի:

Բացի գոլոտուրիից բնագէտները այդ լճում

բոնեցիւն գեղեցիկ հազազիւտ ձկներ, կարմիր, դեղին, շագանակագոյն կորալներ, և հարուստ աւարով դարձան շոգենաւը:

Նրանք այդ կղզին անւանեցին «Բնագէտների թանգարան»:

Երեք շաբաթ ճանապարհ գնալուց յետոյ շոգենաւը կանգ առաւ մի կղզու դիմաց, Աւստրալիայի մայր ցամաքից դէպի հիւսիս: Այդտեղ ապրում էին պապուականները, բոլորովին մերկ ու փոքրիկ մարդիկ: Կանայք խիստ տգեղ էին, իսկ տղամարդիկ ունէին իրենց ցեղին յատուկ դաշած նշաններ:

Երբ ճանապարհորդները ցամաք դուրս եկան, պապուականները շրջապատեցին նրանց, ու ապուշ-ապուշ դիտում էին. նոյն իսկ առանց երկիւղի մօտենում էին ու շօշափում նրանց շորերը, երեսները, բարձր բարձր ծիծաղում. ոմանք մինչև անգամ նաւ մտան և մանկական միամտութեամբ ու անմեղութեամբ հետաքրքրւում էին ամեն բանով:

Այս կղզու բուսականութիւնը շատ նման էր եւրոպական բուսականութեան, միայն տարբեր էին կենդանիները, որոնցից աչքի էին ընկնում ջայլամները, վայրենի շները, պարկաւոր կենդանիներ, որը իր ձագերին պահում է կրծքի պարկի մէջ, թռչունները, քնարահաւը և այն տեսակ թռչուններ, որոնք իրանց բոյնը շինում են հովանոցի ձևով և զարդարում գեղեցիկ գոյն-զգոյն փետուրներով:

Ճանապարհորդները դարձան շոգենաւը և հետեւալ օրը կղզուն մօտեցան միւս կողմից, գետաբերանով: Դա մի մեծ գետ էր, որ թափւում էր ովկիանոսը:

Գետաբերանը հարուստ էր ջրային կենդանիներով ու բոյսերով. նրանք այդտեղից էլ հարկաւոր կենդանիներ ու բոյսեր հաւաքեցին:

Նաւաստին, որ ջրասույզ մեքենայով իջաւ ջրի տակ, առաջին անգամ բերեց այնպիսի էակներ, որ դժւար էր որոշել՝ արդեօք սրանք կենդանիներ էին, թէ բոյս. այդ կենդանիները բռնում են կորալների և ծովամայրերի միջին տեղը: Կային նաև սանդեր, կրաքներ, որդեր, խիռնջներ, սպունգ և այլն:

Երրորդ անգամ երբ նաւաստին մտաւ ջուրը, նրան գրկեց մի հսկայ կայլմար. կայլմարը ծովամայրի (медуза) մի տեսակն է: Մեծ դրժ-ւարութեամբ նաւաստին դուրս բերին ջրից. նա ուշագնաց էր եղել կայլմարի գրկում: Կայլմարը իր շօշափուկներով այնպէս ամուր էր փաթաթել նաւաստի մարմինը, որ հարկ եղաւ կացնով կտոր-կտոր անել այդ կենդանուն և ազատել նաւաստին:

Կայլմարի երկարութիւնը մօտ երկու սաժէն էր. նրա ընդամենը չորս շօշափուկները, երկու արջին երկարութեամբ և վառարանի խողովակի հաստութեամբ, ճառագայթաձև տարածւում էին մարմնի չորս կողմը. մարմինը տձև և անգլուխ մի զանգւած էր. ահագին բերանը նա

բաց ու խուփ էր անում, ինչ-որ բան որոնում։
Նաւաստին պատմում էր, որ նա աւելի
խոշոր ծովամայրեր ու կայմարներ էր տեսել։

Նայտ կղզում տեսնելու առանձին բան չը-
կար. ճանապարհորդներն անցան Աւստրալեան
մայր ցամաքը, իջան Սիդնէյ բաղաքը, որը մի
ժամանակ Անգլիայի արքայութայն էր. այդտե-
ղից սկզբում երկաթուղով, ապա ձիերով՝ հեռ-
ները վերցնելով գերման և անգլիացի առաջնորդ-
ներ՝ մտան երկրի խորքը։

Աւստրալիայի բնութիւնը՝ համեմատած մին-
չև այժմ տեսած կղզիների հետ՝ աղքատ է։ Ամ-
բողջապէս հարթ, աւազոտ տարածութիւն է,
տեղ-տեղ թփերով բռնած։ Մի քանի օր գնալուց
յետոյ, նրանք հասան ընդարձակ արօտատեղինե-
րի. կանաչ արօտները և նրանց վրայ արածող
ոչխարի հօտերը բաւական փոխեցին միօրինակ
տխուր պատկերը։ Այդտեղ ապրում էին քոչւոր
ցեղեր, որոնց և պատկանում էին ոչխարի հօ-
տերը։

Քոչւորների գիւղերից մէկում ճանապարհորդ-
ները կանգ առան։ Նրանց տները ոչ թէ սիւնե-
րի վրայ էին կանգնեցրած, այլ գետնափոր էին,
կտուրները թեք ու ճիւղերով ծածկած. լու-
սամուտ չունէին, չունէին նաև առաջին պատը.
մուտքի մօտ գտնւում էր օջախը։

Վաշկատուների կառավարութիւնը առան-
ձին կազմակերպութիւն չունէր. կային ցեղա-
պետներ միայն, որոնց լսում էին ամենքը։

Այդ գիւղի ցեղապետի անունն էր Վի-Տա-
կօ. դա բարձրահասակ, ուժեղ, մռայլ դէմքով
մի ծերունի էր. մարմնի վրայ կային զանազան
գոյնի նկարներ, բթին ոսկոր էր անցկացրած,
որը բաւական անդուրեկան տեսք էր տալիս
նրան։

Նա հագել էր օպօսումի մորթուց մի եր-
կար չուխայ կամ արայ, գլխին դրած էր նոյն
մորթուց գլխարկ. ոտնամանները կաշուց էին։

Տեղացի ժողովուրդը առանց բացառու-
թեան զբաղւում էր միայն անասնապահութեամբ.
նրանք իրենց հօտերի հետ միասին չւում էին
համարեա անջրդի երկրում մի արօտատեղից
միւսը. շատ աղքատ էին երևում։

Վի-Տակօն, որ բաւականաչափ խօսում էր
անգլիերէն, ինչպէս և նրա հպատակները, բնա-
կարան յատկացրեց նրանց և հրաւիրեց մասնակ-
ցել միւս օրը կայանալիք կենդուրուի որսին։

Կենդուրուն մօտ երկու արշին բարձրութիւն
ունի, յետին ոտքերը երկար են ու անձուռնի.
պոչը խիստ հաստ է ու երկար, որը նստած մի-
ջոցին որպէս նեցուկ է ծառայում։ Մարմինը
ծածկւած է թուխ-մոխրագոյն բրդով, միայն
փորի տակ սպիտակ է, իսկ մուկը շերտաւոր։
Առաջին ոտքերը կարճ են. մարմնի յետին մասը
շատ ծանր է։ Էգերը կրծքի տակ ունեն պարկ,
ուր պահում են ձագերին։ Կենդուրուն կամ ագէ-
վազը ճագարի և մկան մէջ տեղն է բռնում։ Նրա
միսը շատ համեղ է։

Միւս օրը առաւօտեան Վի-Տակօն իր մարդկանցով դուրս եկաւ որսի։ Որսը շատ յաջող անցաւ։ սպանեցին շատ կենդուրոններ, նաև օպօսուսներ, կազուարներ և այլ մանր կենդանիներ։

Վի-Տակօն պատմեց, թէ կենդուրոնները երբեմն այնքան շատ են աճում, որ զգալի վնասներ են հասցնում ցանքերին, ուստի յաճախ որսի են դուրս գալիս և կոտորում նրանց։

Ի պատիւ հիւրերի Վի-Տակօն տեղական պարեր սարքեց. նա փչեց իր փողը և անմիջապէս գիւղից դուրս եկան զիմակաւոր խմբեր, որոնք հաւաքւեցին մի տափարակի վրայ, ուր երկու չոր փայտ իրար քսելով կրակ վառեցին և մի մեծ խարոյկ պատրաստեցին։

Վի-Տակօն շարունակ փչում էր փողը, երբեմն ուժեղացնում, երբեմն մեղմացնում, ապա արագացնում և նորից դանդաղացնում, իսկ զիմակաւորները պարում էին խարոյկի չորս կողմում, նւագածութեան յարմար շարժումներ անելով։

խարոյկի կարմիր կրակը, արագապտոյտ և թռիչքներով պարերը ֆանտաստիկ տեսք էին տալիս այդ տեսարանին։

Սաղերը շարունակեցին մինչև մթնշաղ, երբ ամենքը գոհ և ուրախ ցրւեցին իրանց տները։

Միւս օրը ճանապարհորդները շարունակեցին ճանապարհը միապաղաղ անտառով, որ հաս-

նում էր մինչև լեռնային շրջանը։ Շատ աղքատ էր այստեղի կենդանականը. տեղ-տեղ միայն պատահում էին թիթեռներ, միջատներ. թռչուններից հանդիպեցին օպօսումին, ցուկեղին, նենգին և մրջնակերին։

Երկու շաբաթ այսպէս շարունակեցին իրենց ճանապարհը. նրանց առաջ բացւեցին հարթ անջրդի տարածութիւններ, որտեղ ձիերի համար խոտ անգամ չէր ճարւում։ Նրանք ստիպւած եղան յետ դառնալ, սակայն այլ ճանապարհով— Աւստրալիայի ամենավայրի ցեղերի երկրով։

Բնութիւնն սկսեց կենդանանալ. երևացին խոշոր ծառեր, թռչուններ և խոշոր կենդանիներ։ Առաջնորդները խորհուրդ տւին զգոյշ լինել սև իժից։

Սև իժը, պատմում էին նրանք, այդ երկրի պատուհանն է. երբեմն նրա հետ կուել անհնարին է լինում։ Նա ապրում է անտառի խորքում, թփերի մէջ, աւազոտ և քարքարոտ տեղերում, գետերի ափին և ճահիճներում. մտնում է տները, սողում է նոյնիսկ անկողինների, արկղների և ամանների մէջ. բոլոր օձերից արագ է շարժւում. երբեմն բարձրանում է ծառերը, երբեմն էլ մտնում ջրի մէջ։ Յարձակում է մարդու վրայ և խայթում, մանաւանդ երբ զայրացած է լինում։

Մարտի վերջին բուն է մտնում, իսկ սեպտեմբերին նորից զարթնում. այդ ժամանակ խիստ քաղցած է լինում և կատաղի։

Մինչ ճանապարհորդները զրուցելով առաջ էին գնում, Ռուա-Ռօան մէկ սուր ճիչ հանեց ու փետացած կանգնեց: Ֆրանցը նկատեց, որ իժը յարձակուում է մալազաշի վրայ, հրացանի մի հարւածով օձին տեղն ու տեղը սպանեց, որը գալարումներ գործելուց յետոյ կծեց իր պոչը ու սատկեց:

Օձի յարձակումը փոխեց ճանապարհորդների ուրախ արամազրութիւնը: Ամենքը լուռ գնում էին. այդ միջոցին լսեցին բարձր քրքիչ, որ նման էր մարդկանց ծիծաղի. սակայն այդտեղ մարդկային հետք անգամ չկար: Առաջնորդը ցոյց տալով ծառի վրայ նստած թռչունին ասաց, որ ծիծաղողը նա է. դրա համար էլ նրան կոչում են «ծիծաղկոտ»:

Այդ թռչունը, որ ունի երկար ու սուր կըտուց, գլխին սիրուն ցցունք, եւրոպական գաղութների բարեկամն է համարւում. նա անխնայ կոտորում է օձերին: Առաւօտները իր ծիծաղով զարթնեցնում է քնածներին. դրա համար էլ նրան անւանում են «բուշմէշների ժամացոյց»:

Պատահած բոյսերից ուշադրութեան արժանի էին՝ վայրի թթու կեռասը (*Exocarpus*), որի կորիզը պտղի ներսում չի գտնւում, այլ դրսում, նրա մի կողի վրայ, նոյնպէս աւստրալիական ալիաքին, որ բնքոյշ բուրմունք ունի: Շատ էր պատահում և էվկալիպտուսը. դա արագ աճող ծառ է, ունի հոտաւէտ տերեւներ. եթէ տնկում են ճահճուտ տեղերում, արագ աճում է և կարճ միջոցում

գեղեցիկ ու բուրաւէտ անտառ դառնում. իր այդ յատկութեամբ նա ամենալաւ միջոցն է համարւում կուելու տիֆ և դողերոցը հիւանդութիւնների դէմ, որովհետեւ այդ ծառի միջոցով ամեն մի ճահճուտ, ուր զարգանում են նման հիւանդութիւնները, կարելի է առողջարարար անտառի վերածել:

Այդ տեղերում աճող բոյսերից աչքի էր ընկնում նոր-գելանդական վուշը, որը բարձրանում է մօտ մի սաժէն, ունի հաստ ցողուն և կարմիր ծաղիկներ: Նրա երկար ու պինդ թելերից գործում են պարաններ, կտաւ և այլ շորեղէն, որ գերազանցում են իրենց ամրութեամբ, ձկունութեամբ ու փայլով:

Մեր ճանապարհորդները այնուհետեւ երկար գնում էին երբեմն անբերրի հարթութիւններով, երբեմն գետերի ափերով ու լճերի արանքով. վերջապէս հասան մի գիւղի:

Գիւղի բնակիչները խափշիկներ էին. զբաղւում էին ձկնորսութեամբ, ունէին իրենց նաւակները և, ինչպէս երևում էր, ծանօթ էին սպիտակ մարդկանց: Տղամարդիկ մերկ էին, իսկ կանայք գօտիներ ունէին կապած և խեցիներից զարդարանքներ:

Գիւղը բաղկացած էր երկու մասից. ցած մասում, ծովի ափին, ապրում էին ձկնորսները. նրանք բարձրահասակ, առողջ մարդիկ էին: Վերին մասում ապրում էին հողակերները:

Հողակերները ուտում էին գեղին իւղոտ

հողը—մուսիա. նրանք նիհար էին, ինչպէս կը-
մախք, երեսները դեղին, փորերը ուռած. նրանք
նման էին կենդանի դիակների և տարէցտարի
ոչնչանում էին:

Այդտեղի ժողովուրդը, այլֆուրների նման,
յանդուգն գողեր էին, այդ պատճառով ճանա-
պարհորդները շտապեցին հեռանալ նրանցից:

Սակայն ճանապարհորդները չէին կարող
հեշտութեամբ նրանց ձեռքից ազատել: Կանխո-
քէն մտածած պայմանով նրանք ճանապարհին
յարձակեցին ճանապարհորդների վրայ. միայն
առաջնորդների հմտութիւնն էր, որ ճանապար-
հորդներին փրկեց լուրջ վտանգից:

Երկար թափառումներից, մի շարք զրկանք-
ներ ու նեղութիւններ կրելուց յետոյ, ճանա-
պարհորդները մի կերպ հասան եւրոպական գա-
ղութը: Այդտեղ բաւական հանգստանալուց ու
կազդուրելուց յետոյ գնացին շոգենաւը:

Վերջին օրերը կրած տանջանքները ստի-
պեցին գիտական արշաւախմբին, առաւելապէս
պատանիներին չափաւորել ճանապարհորդելու
ցանկութիւնը: Որոշեցին թողնել Հարաւային բե-
ւեռը գնալու ծրագիրը և Կորալեան ծովի
վրայով անցնել Սամօա արշիպելագը և յանտեղից
դառնալ հայրենիք:

XIV

Ֆիջի կղզիները. երկրաշարժը ծովի վրայ. «Համաձայնութիւն»
նաւը. Խմբարշաւ դէպի մարդակերները. Գերիների աղաաւմը:

Տոնգա կղզիներին դեռ չը հասած՝ «Համ-
մոնիան» Կորալեան մի շարք կղզիներ այցելեց:
Այդ կղզիների վրայ բարձրանում էին արմաւե-
նու կանաչ ծառերը, որոնց մէջ վիտում էին
ծովային սիրուն թռչունները: Այդտեղ ծովը
անչափ հարուստ էր կենդանիների և բոյսերի
հազւագիւտ տեսակներով:

Ճանապարհորդների ուշադրութիւնը գրա-
ւեց առանձնապէս սիֆոնոֆոր կոչւած պոլիպը
իր աննման գեղեցկութեամբ ու արտասովոր ձե-
ւով. քնքոյշ և կաթնագոյն փամփշտի վրայ շար-
ւած էին ինչ հարիւրից աւելի սպիտակ փամ-
փըշտիկներ, որոնք անդադար բացւում ու փակ-
ւում էին և այդպիսով պահում այդ տարօրինակ
կենդանիներին ջրի երեսին:

Բռնել պոլիպին անկարելի էր, որովհետեւ
նրա ամբողջ գեղեցկութիւնը իսկոյն կ'ոչնչա-
նար և նա կը դառնար դժգոյն մաժուցիկ մի
զանգւած:

«Համմոնիան» խարխաւ ձգեց Տոնգա կղզ-
իների ափին: Որովհետեւ այդտեղ ապրում էին
մարդակերները, ճանապարհորդները որոշեցին
չգնալ կղզիների խորքը: Քսան լաւ զինւած նա-
ւաստիները ուղեկցութեամբ նրանք ափ դուրս

եկան, հետներն ունենալով ամեն պատրաստութիւն:

Թփերի տակից դուրս եկան բարձրահասակ, գեղեցիկ մարդիկ՝ բաց-գեղնագոյն մորթով, խելացի սև աչքերով, երկար ու թուխ մազերով. նրանք հետաքրքրութեամբ դիտում էին սպիտակներին:

Նրանց տները շինւած էին ցցերի վրայ. օջախը գտնուում էր տան մէջ տեղում փորած փոսի մէջ. տան կահ-կարասին կազմում էին սիրուն գործած փափաթներ, կողովներ, գէնք և կորայլից պատրաստած այլ և այլ զարդեր: Աղբատութիւնը և անհոգ վերաբերմունքը ապրուստ հայթայթելու գործում ընդհանուր էր և գերիշխող: Երկրագործութեան ոչ մի նշան չէր երևում:

Կղզու բնակիչները պոլինեզիացիներ էին: Զանազան նւէրների միջոցով հնար եղաւ գրաւել նրանց և մօտ կանչել:

Երեխայի նման հետաքրքրւում էին ամեն բանով և ամեն ինչի ձեռք մեկնում: Խիստ վախում էին գրքերից, որոնց մէջ, երևի, որևէ կախարդական ոյժ էին ենթադրում:

Միւս օրը վաղ առաւօտեան ծովի երեսը ծածկուեց գորշ շերտով. դրանք մանր, բարակ որդեր էին: Պոլինեզիացիները իսկոյն նստեցին իրենց նաւակները, դուրս եկան ծով և սկսեցին որսալ այդ որդերը, որ նրանց ամենահամեղ կերակուրն էր կազմում:

«Համամոնիան» երրորդ օրը խարխիսը վերց-

նելով ուղևորւեց դէպի Ֆիջի կղզիները: Այդտեղից ենթադրում էին անցնել Սամօա կղզիները, ապա վերադառնալ հայրենիք:

Արևելեան Ովկիանոսի Սամօա և մի քանի այլ կղզիներում ապրում են երեք ցեղ—մելանեզիացիներ, պոլինեզիացիներ և միկրոնեզիացիներ: Առաջին երկու ցեղերը խարդախ են և զոդ. վերջինները աղքատ են, տգէտ ու ծոյլ:

Քիչ-շատ ուշադրութեան արժանի են պոլինեզիացիները, որոնք ապրում են Ֆիջի կղզիներում:

Շոգենաւը Ֆիջիի ճանապարհին, ծովի վրայ հանդիպեց փոթորկի և երկրաշարժի: Շրջակայ բոլոր կղզիները հրաբխային ծագում ունեն. նրանց վրայ կան շատ հրաբխային լեռներ, որոնցից շարունակ ծուխ է բարձրանում:

Հրաբուլխն սկսեց մօտակայ կղզու վրայ. քիչ անց՝ ծովի յատակից լսեցին գոռոցներ ու պայթիւններ. կորալեան մի փոքրիկ կղզու վրայ բարձրացաւ հրեղէն սիւն, ալիքները գոռոցներով խլացնում էին և լեռների նման իրար հետևում, իրար վրայ թափւում: Եռացող ջուրը ծխի ու կայծերի հետ խառը անձրևի նման թափւում էր շոգենաւը և այրում տախտակամածի վրայ կանգնողներին: Երկիւղը մեծ էր, բոլէն վտանգաւոր. փոքրիկ կղզին և խութը կորան ջրի մէջ:

Բայց այդ երկար չտևեց. ծովն սկսեց հանդարտւել, նրա երեսը ծածկուեց խաշւած ձկնե-

րով, որդերով, խեցգետիններով և այլ մանր ու խոշոր կենդանիներով:

Տեղացիները հաւակներով սկսեցին ջրի երեսից հաւաքել բնութեան կրակով եփւած այդ կենդանիները:

Հետեւեալ օրը ծովի վրայ գտան «Համաձայնութիւն» անունը կրող գերմանական հաւի բեկորները. իսկ երբ Վիտի-Լեու կղզու մօտ խաւիսի ձգեցին, նրա ափին կապած տեսան մի մակոյկ, որը, ինչպէս ցոյց էր տալիս վրայի գրութիւնը, պատկանում էր այդ հաւին:

Ճանապարհորդները եզրակացրին, որ «Համաձայնութիւն» հաւը խորտակել է, իսկ ուղեւորները մակոյկով դուրս են եկել կղզի: Երեւի քաղցից և ծարաւից ստիպւած անցել են կղզու ներսը ուտեստ և խմելիք ձարելու:

Այն հանգամանքը, որ կղզու բնակիչները մարդակերներ էին, ճանապարհորդներին մտածել էր տալիս, որ եթէ իրենց հայրենակիցները կենդանի են, անպայման փախչելու դրութեան մէջ կարող են լինել, ուստի անհրաժեշտ էր օգնութեան հասնել նրանց:

Խորտակածներին օգնութեան հասնելու միտքը, որ անցնում էր ամենքի գլխով, ամենից առաջ յայտնեց Ֆրանցը: Մեծամասնութիւնը պաշտպանեց այդ միտքը, և նրանք ամենքը՝ երեք խմբի բաժանւած՝ դիմեցին կղզու խորքը:

Ռուա-Ռօան, որի թէ տեսողութիւնը, թէ այլ զգայարանները և թէ անտառի մէջ գործ-

ւում բնագործ անհամեմատ աւելի զարգացած էին, շուտով գտաւ եւրոպացիների հետքը: Այդ հետքը բռնելով՝ նրանք գնացին և գտան հայրենակիցներին, որ գերի էին ընկել ֆիջիցիների ձեռքը:

Եւրոպացիները ձեռք ու ոտք կապւած նստած էին մի կողմում, իսկ միւս կողմում ֆիջիցիները բէֆ էին անում: Միանգամից փոխադրեցին նրանց չէր կարելի, որովհետեւ ամբողջ գիւղը հաւաքւած էր այնտեղ. պէտք էր մի կերպ նրանց ուշադրութիւնը մի կողմ գրաւել և այդպիսով հեռացնել այդտեղից:

Այդ բանը յանձն առաւ Ռուա-Ռօան. նա շորերը հանեց և հրացանը որպէս ձեռնափայտ բռնած ծածուկ մտաւ գիւղը. մնացորդները պիտի յարձակէին այն միջոցին, երբ Ռուա-Ռօայի կողմից պայմանաւորւած նշանը տրւէր:

Իսկ Ֆրանցը գաղտագողի թփերի տակից սողաց իր հայրենակիցների մօտ. երբ թփերի խշխշոցից ծայրի նստողը յետ հայեց, Ֆրանցը ձեռքի շարժումներով հասկացրեց նրան ձայն չհանել և ապա աւելի մօտ գնալով՝ փորի վրայ պառկած՝ սրով կտրեց նրա ձեռքերի կապերը և սուրը թողնելով նրա մօտ, թագնեց թփերի ետևը:

Այդ պահին գիւղի կողմից լսեց հրացանի ձայն, որը կրկնեց մի քանի անգամ: Վայրենիները վազեցին գիւղի կողմը: Գերիները մնացին առանց հսկողութեան, ճանապարհորդները իսկոյն կտրտեցին նրանց կապերը:

Քիչ անց Ռուս-Ռօսան նրանց մօտ էր: Նա պատմեց, որ կրակ է գցել նրանց տաճարը, որին զոհ են բերում մարդկանց:

Ֆիլիցինները ուշ հասկացան բանի էությունը և երբ յետ դարձան եւրոպացիներին հալածելու, նրանք արդէն նաւ էին նստել և իրենց հետ տարել Ֆիլիցինների նաւակներն էլ, որպէսզի նրանք չկարողանան ծովի վրայ դուրս գալ:

Ճանապարհորդներն, ի հարկէ, վերադարձրին նրանց նաւակները, բայց իրանք արդէն բաւական հեռացել էին, հետեւաբար վայրենիները նրանց հասնել չէին կարող:

XV

Սամօա արշիպելագը. Տուտուլլա կղզին. Տեղացիների բարքն ու սովորութիւնները. Օպօլու կղզին. Ջրվէժը. Խմբարշաւը դէպի հեթանոս-վայրենիների շրջանը. Նրանց արդարադատութիւնը. Ռուս-Ռօսայի մկրտութիւնը. Վերադարձ:

«Համամոնիան» խարիսխ ձգեց Սամօա արշիպելագի կղզիներից ամենամեծի, այն է՝ Տուտուլլի ափին: Տուտուլլը կարծես կղզի չլինէր, նա նման էր մեծ ու փարթամ մի այգու:

Տեղացի ժողովուրդը—գեղեցիկ ու դեղնամորթ պօլինեցիները—ապրում էին կանոնաւոր շինւած գիւղերում և զբաղւում էին երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Ընտանի կենդանիներից շատերին եւրոպացիներն էին բերել այստեղ:

Սուերախիտ պուրակներում ցցւած էին բոլորաձև խրճիթները, նրանցից քիչ հեռու ընկած էին գոմերն ու սրահները և խնամքով մշակւած սիրուն պարտէզները:

Անտառի մէջ բաց տեղերում ցանւած էին եւամ, տարօ, կարտօֆիլ և այլ բանջարեղէն. այնտեղ կային և քարէ օջախներ, ուր արմաւենու իւղ էին հանում:

Տեղացի ժողովուրդը սովորաբար կապում էր միայն լայն գօտի, բայց ունէր և տօնական շորեր, որ հագնում էր հանդիսաւոր օրերին:

Մի գեղեցիկ առաւօտ գիւղի ամբողջ ժողովուրդը տօնական հագուստով դուրս եկաւ փողոց: Փողոցով անցնում էր մի մարդ՝ փայտէ ամանը ձեռքին, թմբկահարում էր և, ասես, մի անսովոր լուր էր յայտարարում:

Ճանապարհորդները հետեցին նրան մինչև մօտակայ բլուրը, որտեղ ցեղապետն իր առանձին տեղն էր զբաւել. նրա մօտ էր և իրա ծաղրածուն, իսկ ջահէլ աղջկերք ու տղաներ գնդակ էին խաղում:

Ամենքի հագուստն էլ արտասովոր էր, բայց ամենից աւելի հետաքրքրականը ծաղրածուն էր իր հագուստով ու խաղերով: Նրա մարմինը նախած էր ֆանտաստիկ նկարներով և զարդարած էր գոյնզգոյն փետուրներով, քարերով, ծաղիկներով և սաղափի շարաններով: Երեսին մի այլանդակ դիմակ էր դրած, իսկ գլխի երկար մա-

գերը տարածւում էին կրծքի, ուսերի և մէջքի վրայ: Մի ինչ-որ փայտէ փող բերանին շաքու- նակ փշում էր ու խաղում հազար ու մի ծամա- ծռութիւններ անելով:

Ծաղրածուն այդտեղի ոչ բուրմն էր և ոչ էլ վհուկը, այլ ապրում էր ցեղապետի մօտ նը- րան զւարճացնելու համար. նա շատ յանգուցն էր վարւում ցեղապետի հետ, խփում էր նը- րան, ականջները քաշում. միայն նա տգատ մուտք ունէր ցեղապետի բնակարանը: Միւսների համար ցեղապետի տան մուտքը արգելած էր:

Այդ սովորութիւնը կամ արգելքը, որ տեղա- կան լեզուով արտայայտւում է «Տաբու» բառով, գոյութիւն ունէր Հարաւային Ովկիանոսի բոլոր կղզիներում, նոյնիսկ Նոր-Զելանդիայում: Քրմե- րի, ցեղապետների սների և անշարժ կայքերի, տաճարների և երբեմն ամբողջ տարածութիւն- ների վրայ «տաբու» կամ արգելք էր դրւում, որի պատճառով ժողովուրդը իրաւունք չուներ այդ տեղերը մտնելու:

Այդ սովորութիւնը մեծ չարիքների պատ- ճառ է դառնում, որովհետև այդ միջոցով հա- բուստ և ուժեղ մարդիկ գրաւում են այն ամենը, ինչ դիւր է գալիս իրանց—լաւ պտղատու ծա- ուեր, յարմար բնակարաններ, օգտակար կենդա- նիներ և այլն և «տաբու» դնում վրան, որից յետոյ ոչ ոք իրաւունք չուներ մօտենալ կամ ձեռք տալ դրանց:

Երբ ճանապարհորդները ներկայացան ցեղա-

պետ Լելէին, որ կնոջ հետ միասին ծալապատիկ նստած էր փետուրներից գործած փախթների վրայ, նա սիրով ընդունեց նրանց, հակառակ տիրող սովորութեան հրաւիրեց իր տուն, ուր միասին ճաշեցին:

Լելէն տանջւում էր յօգացաւով. նա ճանա- պարհորդներից դեղեր ստացաւ, իսկ զրա փոխա- րէն զանազան նւէրներ տւեց նրանց—բուսական թելերից և փետուրներից պատրաստած շորեր, սաղափէ ուլուներ, նախշած ձեռնափայտ, շատ հին քարէ կացին, որի կոթը փայտից էր, նոյն- պէս դաջելու մի շատ հին գործիք, որ շինւած էր մարգու ոսկրից, և ժառանգաբար անցնում էր որդոց որդի: Հաւանօրէն դարեր շարունակ այդ գործիքը ծառայել էր ցեղապետների մար- մինը դաջելու, որով նրանք տարբերւում էին իրենց հպատակներից:

Այդ ցեղի ցեղապետներն այլ ևս չէին դաջ- ւում, որովհետև բոլորն էլ քրիստոնեայ էին, հետևապէս այդ գործիքի պէտք չուներ:

Ցեղապետի ամուսինը, աիկին Լի-Փօն հիւ- րերին նւիրեց իր գլխի զարդարանքները, վզնոցը և այլ շորեղէններ, որ սովորաբար կրում էին ցեղապետների աղջիկները: Որովհետև նրանք զաւակ չուներին, բարւոք համարեցին այդ ա- մենը յանձնել այդ իրերի յարգն իմացող եւրո- պացիներին:

Այս բախտաւոր կղզում, ուր բնութիւնը լիովին վարձատրում էր չնչին աշխատանքն ան-

գամ, ուր մարդիկ աչքի էին ընկնում հեղ ու խաղաղ բնաւորութեամբ, և ուր բացակայում էին գիշատիչ գազանները, ճանապարհորդները փափայլուն մի ամբողջ շաբաթ և վայելեցին հովական կեանքի կենարար թարմութիւնը:

Նրանք շրջեցին կղզին ծայրից ծայր, հաւաքեցին տեղային կեանքին և տնտեսութեանը վերաբերող շատ իրեղէններ ու գործիքներ, ցեղապետի ընտանիքի համար շինել տւին առողջապահական տեսակէտից յարմար բնակարան և հեռացան կղզուց բաղցր յիշողութիւններ տանելով իրանց հետ:

Անցնելով Սափայի կղզու մօտով, որ կարծես ժայռերից էր ձուլւած և հետևապէս հետաքրքրական ոչինչ չունէր իր վրայ, դուրս եկան Օպօլու կղզին:

Օպօլուն դիւթեց ճանապարհորդներին իր գեղեցկութեամբ: Այդ կղզին ճանապարհորդների համար երկրորդ հայրենիքը կարող էր համարուել, որովհետև այդտեղ հաստատուել էին եւրոպական գաղութներ, առանձնապէս Գոտֆրիդի առևտրական տունը ահագին կալւածքներ ու առևտրական հիմնարկութիւններ ունէր, որոնք մի փոքրիկ պետութիւն էին կազմում:

Հենց առաջին վայրկեանին, երբ մօտեցան կղզուն, ճանապարհորդներին հիացմունք պատճառեց ահագին բարձրութիւնից ծովը թափւող ջրվեժը. վիթխարի ժայռի կրճերի վրայով ջրի ահագին հոսանքը աստիճան առ աստիճան

ճիւղերի բաժանւելով և ապա միանալով ու հետզհետէ լայնանալով, բիւրաւոր ցայտուններով ծովի մէջ էր թափւում, եռուն ու գեոուն փրփուրների կամարակապ հիւսւածքներ առաջանելով այնտեղ. և այդ ամէնը արևի լոյսի տակ շողում էր ծիածանի բոլոր գոյներով:

Ջրվեժի վերևում որպէս փառաւոր պսակ բարձրանում էին հրաբխային գազաթները, զարդաբւած արմաւենու սուերախիտ անտառով. գազաթների մէջ ամենից բարձրն էր Տաֆնան:

Սարերից մէկի լանջին ընկած էր եւրոպական մի փոքրիկ բաղաք իր եկեղեցիներով ու բարձր շէնքերով, շրջապատւած բազմատեսակ կանաչով: Նաւահանգստում ծածանւում էր Համբուրգի դրօշակը:

Հենց որ «Համմոնիան» դուրս եկաւ նաւահանգստի առաջ թէ չէ, ազդանշանի համաձայն նաւակով նրան դիմաւորելու դուրս եկան Գոթֆրիդի առևտրական տան ծառայողները:

Նաւահանգստում ճանապարհորդներին շրջապատեցին նաւաստիներն ու հայրենակիցները. ծանօթ-անծանօթ բարևում, ուրախանում էին. ամեն տեղ գերմանական խօսքն էր հնչում:

Եւրոպական այս գաղութում բնիկ ժողովուրդը, որ մեծ մասամբ պօլինեզիացիներ էին, արդէն համակերպւել էր եւրոպական կեանքին, կուլտուրական աշխատանքի էր դիմել. այստեղի բնակւորների մեծ մասը տեղացիներ էին, որոնք

կատարելապէս իւրացրել էին եւրոպական բան-
ւորի աշխատանքի եղանակն ու ձևը:

Ճանապարհորդներին սենեակներ յատկացրին
Գոտֆրիդի կալածքների կառավարութեան գլը-
խաւոր շէնքերում, որտեղ նրանք, այդքան երկար
ու վտանգաւոր ճանապարհորդութիւնից յետոյ,
հաճոյքով վայելեցին քաղաքակրթութեան բարիք-
ները:

Ֆրանցի և Հանսոյի՝ այդ մատաղ հոգիներ-
ի համար, այժմ արևի պէս պայծառ էր ու պարզ
քաղաքակրթութեան էութիւնը, նրա առաւելու-
թիւնը վայրենի գրութեան հետ համեմատած:
Նրանց համար այժմ միայն կատարելապէս հաս-
կանալի դարձաւ, թէ ինչ բարիքներ է գործում
հայր Գոտֆրիդը, երբ եւրոպական գաղութներ
է հաստատում և կուտուրա տարածում վայրե-
սիների մէջ:

Այդ ամենից յետոյ շատ պարզ էր, թէ
ինչու նրանց քնքոյշ ու անաղարտ հոգին բոցա-
վառեց անձնւիրութեան նուրբ կրակով.— գնալ
հայրենիք, ապա աւելի լաւ պատրաստութեամբ
վերադառնալ այդ կղզիները և քաղաքակրթու-
թեան կենսատու լոյսը տարածել թշուառ ու ըստ-
րուկ վայրենիների մէջ:

Պատանիներին մեծ ուրախութիւն պատճա-
ռեց գաղութի դպրոցը, որտեղ այնքան շանա-
սիրութեամբ սովորում էին տեղացի ժողովրդի
մանուկները և այնքան արագութեամբ ընդու-
նում և իւրացնում եւրոպական կուտուրան ու

գիտութիւնը. վայրենի հօր դաւակը, կանոնաւոր
դպրոցի շնորհիւ, քաղաքակիրթ մարդկութեան
շարքն էր անցնում, համեմատաբար կարճ ժա-
մանակի ընթացքում:

Թօսակցութեան ժամանակ Ֆրանցին յայտ-
նեցին, որ թէև Սամօա կղզիների ազգաբնակու-
թեան մեծ մասը քրիստոնեայ է դարձել և հետ-
զհետէ ընդունում է քաղաքակրթութիւնը, բայց
լեռնային մասերում դեռ կան ժողովուրդներ,
որ խուսափում են կուտուրայից, դեռ մնացել
են հեթանոս և շարունակում են իրանց դաժան
սովորութիւններով ապրել:

Ճանապարհորդները որոշեցին վերջին շրջ-
նագայութիւնը կատարել այդ լեռնային շրջանում,
ապա ուղևորել հայրենիք: Երկու շաբաթ հան-
գստանալուց յետոյ նրանք ճանապարհ ընկան և
շուտով մտան այդ շրջանը: Այդտեղի բնութիւնը
իւր չնաշխարհիկ տեսարաններով ամեն մի քայ-
լափոխում գերում էր ճանապարհորդներին. ա-
ռանձնապէս աչքի էին ընկնում անթիւ ջրվէժ-
ները:

Լեռնային շրջանի բնակիչները թէև անկիրթ՝
բայց խեղճ, հիւրասէր և ազնիւ ժողովուրդ էին,
աշխատանքից խուսափող: Նրանց փոքրիկ գիւ-
ղերը ցրած էին կուսական անտառներում. գեր-
մանական գաղութի մօտ լինելու շնորհիւ նրանք
իրենց ապահով էին զգում:

Նրանց ամեն կողմից բաց խրճիթները
գտնւում էին հացերի դարաւոր ծառերի տակ,

ծառերի՝ որոնցից երեքը բաւական էին մի մարդու ամբողջ տարի կերակրելու:

Կոկոսի ծառերը ծանրաբեռնւած էին ընկոյզներով: Շերամածառի կեղևից նրանք պատրաստում էին իրանց շորեղէնը, արմաւենու հսկայ տերեւներով ծածկում տների կտուրները, իսկ բամբուկից շինում էին տան պատերը և տնային այլ իրեղէններ ու կարասիներ:

Ամենից առաջ գիւղ մտնելիս ճանապարհորդներին զարմացրեց այն բանը, որ այգտեղ երեխաների թիւը շատ սակաւ էր. այդ բացատրւում էր նրանով, որ տեղացիները առանց խղճի խայթ գգալու սպանում էին երեխաներին՝ նրանց կերակրելու հոգսից ազատելու համար: Քրիստոնեայ միսիոնարները աշխատում էին իրանց քարոզներով վերայնել այդ վայրենի սովորութիւնը:

Գիւղի միջում ճանապարհորդները հանգիպեցին վեց հոգուց բաղկացած մի խումբ մարդկանց, որոնք մի ինչ-որ մարդու փշոտ գերանի վրայ կապած ուր-որ տանում էին. նրա գլուխը այս ու այն կողմն էր օրօրւում, բերանից թափւում փրփուրը, աչքերը յուսահատութիւն արտայայտում, ձեռքերից և ոտքերից արիւն էր հոսում: Ամբոխը շրջապատած նրան՝ թքում և հայնոյում էր. ամենից առաջ գնում էր քուրմը՝ երկար գաւազանը ձեռքին, սիգաձեմ քայլածքով:

Եւրոպացի ճանապարհորդներին համար ան-

տանքի էր տեսնել այդ և համբերել. նրանք իսկոյն միջամտեցին և աղատեցին երիտասարդին մահաւան ճիրաններից:

Այդ երիտասարդին մեղադրում էին գողութեան մէջ և տանում էին պատժելու. սակայն բանից պարզեց, որ նա եղել է ստրուկ և նրա տէրը շարունակ կեղեքելիս է եղել նրան և նրա ընտանիքին, խլել է նրանց ամբողջ գոյքը և ստիպել իր համար աշխատել: Եւ երբ քաղցից ստիպւած նրա ընտանիքը վերցրել է իր սեփականութիւնից ուտելու այն, որ խլել էր տէրը, այդ համարւել էր գողութիւն, և դրա համար, տեղական սովորութեան համաձայն, տան հայրը պատիժ պիտի կրէր, այսինքն սպանւէր:

Երիտասարդի անունն էր Ալլօլօ. նրան այլևս այնտեղ թողնել չէր կարելի, որովհետեւ հարեաններն իսկոյն կսպանէին. նա իր ընտանիքով եւրոպացիների օգնութեամբ փոխադրեց գերմանական գաղութը և քրիստոնէութիւն ընդունեց:

Ճանապարհորդները Լանուդօ հրաբխային սարը տեսնելուց և Տաֆնանի գլուխը բարձրանալուց յետոյ՝ ստորերկրեայ անցքով վերադառնան Ապիա գերմանական գաղութը: Հետաքրքրական էր այդ ստորերկրեայ անցքը, որը մի քանի մօտն երկարութիւն ունէր. նա գնում էր սարերի տակով և դուրս գալիս ովկիանոսի ափը. տեղ-տեղ ընդհատւում էր, այնպէս որ կէս ժամ զննուլուց յետոյ կարելի էր նորից դուրս գալ:

Վերջապէս հասաւ ժամը վերջ տալու՝ թէեւ հետաքրքրական ու կրթիչ՝ բայց նաև վտանգաւոր ճանապարհորդութեանը և բռնել յետադարձ ուղին: Պատանիներին մեծ ափսոսանք պատճառեց Ռուս-Ռօսայից բաժանելը, որը այդ դաշութեամբ բաւական լաւ պաշտօն ստացաւ Գոաֆրիդի առեւտրական տան գործերի մէջ:

Տաք գրկախառնութեամբ և ջերմ համբոյրներով բաժանւեցին մեր ճանապարհորդները իրենց բարեկամներից, երբ շոգենաւր սուլեց և առաջ սլացաւ:

XVI

Վերադարձ. Վերջին արկածը. Համբուրգում:

«Համմոնիան» անցաւ հարաւային և հնդկական ովկիանոսներն ու մտաւ կարմիր ծովը. միակ նորութիւնն այդտեղ այն էր, որ ճանապարհորդները տեսան կարմիր լուեր (водоросли), որոնք տեղ-տեղ ահագին տարածութիւն են բռնում, և որոնցից ծովը կարմիր գոյն է ստանում. այդտեղից է առաջ եկել և ծովի կարմիր անունը:

Կարմիր ծովից շոգենաւր անցաւ Սուէզի ջրանցը: Ինչպէս յայտնի է, Սուէզի պարանոցը, որ 15 մղոն լայնութիւն ունի և բաժանում էր Միջերկրական ծովը կարմիր ծովից, ջրանցքի փոխեց ֆրանսիացի մեծ ճարտարապետ Ֆերդինանդ Լեասեպսի նախաձեռնութեամբ: Զրանցքի

խորութիւնը $3\frac{1}{2}$ սաժէն է, լայնութիւնը՝ 30—50 սաժէն. նա շրջապատւած է ցեմենտէ պատաւարով:

Սուէզի ջրանցքից ճանապարհորդները դուրս եկան Միջերկրական ծովը: Մի քանի օր առաջ այդտեղ պայթումից ջրասոյգ էր եղել ֆրանսիական մի շոգենաւ. այժմ աշխատում էին ջրից դուրս հանել նաւի բեկորները, կամ գոնէ նրա միջի թանգարժէք բեռը: Նաւաստիները ջրասոյգ մեքենայի օգնութեամբ իջնում էին ծովի յատակը:

Ճանապարհորդները հետաքրքրութիւնից զրգւած գէպի այն կողմը նաւարկեցին իրանց նաւը՝ աւելի մօտից դիտելու այդ հետաքրքրական աշխատանքը: Երբ ջրասոյգներն արգէն իջել էին յատակը և սկսել իրենց գործը, նրանցից մէկի վրայ յարձակեցին երկու «սուներ» կօշտած ձկներ՝ երկու և կէս սաժէն երկարութեամբ: Նրանց վերին ծնօտները սղոցի ձև ունէին և երկու արշինից աւելի երկարութիւն: Այդ երկար ծնօտը շատ սուր է և ձկան համար գէնքի տեղ է ծառայում: Ծնորհիւ այն հանգամանքի, որ նաւաստին հագած էր կաուչուկէ շորեր և գլխին ունէր պողպատէ սաղաւարդ, ձկան հարածները այնքան էլ փափ չուին նրան: Սակայն ձկները կարող էին կաուչուկէ խողովակները կոտրատել և նաւաստիներին զրկել օդից:

Այստեղ օգնութեան հասաւ Ֆրանցը. նա իսկոյն պարանի վրայ ամրացրած ու փա-

Թաթևած բրդէ վերմակը ջուրը ձգեց. ձկները շտապեցին մարդուն վերմակից՝ յարձակեցին վերմակի վրայ. մինչ այդ նաւաստիին դուրս հանեցին ջրից: Նրա շորերը տեղ-տեղ պատռւել էին ձկների հարածներից, և մարմինը վիրաւորւել էր:


Սակայն ձկներին այդ բանը էժան չնստեց. նաւարարիկ նաւաստիները վերջ ի վերջոյ սպանեցին այդ երկու ձկան և դուրս հանեցին:

«Սուսեր» վիթխարի ձկների որսով փակւեց մեր գիտական արշաւախմբի արկածների շաղկապը:

Մի քանի օրից յետոյ «Համմոնիան»՝ անցնելով Զիբրալտար նեղուցը, Ատլանդեան ովկիանոսան ու Գերմանական ծովը՝ կանգ առաւ Համմոնիայի նաւահանգստում:

Թէ ինչ յոյզերով ու զգացմունքներով դիմաւորեցին պատանիները մայրենի հողն ու ծրարութիւններին—նկարագրել անհնար է:

Այո, մարդու կեանքի մէջ լինում են բախտաւոր բոլէներ, երբ գրիչն անկարող է արտայայտել այն: Միայն այդպիսի բոլէներ ապրողն ինքը կարող է հասկանալ, թէ ինչ բան է իսկական բախտաւորութիւնը:



NI 0003821

